Պատկեր 3. *Ստամբուլի Սուլեյմանիյե գրադարանի Այա Սոֆիայի հավաքածուի՝ Իբն Բիբիի երկի ամբողջական տարբերակի միակ պահպանված թիվ 2985 ձեռագրի 20բ էջը, որտեղ սկսվում է հայոց արքունիք սելջուկ սուլթանի հյուրընկալության մասին պատումը:*



Պատկեր 4. *Ռ. Շուքուրովի կասկածելի վերծանած Իբն Բիբի երկի հատվածը*

ԿԱՐԱՊԵՏ ԵՐԵՒԱՆՑԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲԴԱԼ, ԲԱԼԱՍԱՆ, ԽԱՉԱՏՈՒՐ ԵՒ ԱԶԱՐԻԱ (ՃԳՆԱՒՈՐՆԵՐ)

Մերուժան Կարապետեան

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԺԷ. դարի 40-60-ական թուականներին առաջին եւրոպացի հայագէտ Կղեմէս Գալանոսի կողմից հիմնուեցին հայկական վարժարաններ Կ.Պոլսում, ապա՝ Հռոմում եւ ի վերջոյ՝ Լեհաստանում, Լւովում: Այս բոլոր վարժարանները մի շարք պատճառներով կարճատեւ կեանք ունեցան, իսկ աշակերտները՝ յաճախ տարօրինակ ճակատագրեր: Հռոմի Հաւատասփիւռի ժողովի դիւանում մեր յայտնաբերած փաստաթղթերը թոյլ է տալիս հետեւելու այդ վարժարանների հիմնադրման, կենսագործունէութեան, դասաւանդուող առարկաներին եւ մեթոդաբանութեանը, աշակերտներին եւն: Վերջին տարիներին առանձին ուսումնասիրութեան նիւթ դարձրինք Գալանոսին աշակերտած անձանց կենսագործունէութեան վերականգնումը մշտապէս յենուելով Հաւատասփիւռի ժողովի դիւանի նիւթերի յայտնաբերման, դասակարգման եւ մեկ համատեքստում ներկայացնելու վրայ:[1] Ստորեւ ներկայացւում են Կղեմէս Գալանոսի եւ նրա հիմնած վարժարանների հետ այս կամ այն չափով առընչուած եւս հինգ անձանց՝ կարապետ վրդ. Երեւանցու, Յովհաննէս Աբդալի, Բալասանի, Խաչատուր եւ Ազարիա ճգնաւորների մասին դիւանում պահպանուած տեղեկութիւնների քննութիւնը:

1. ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԵՐԵՒԱՆՑԻ (°-1662)

ա. Կարապետ Երեւանցին Պոլսում (1638-1643).

Կարապետ վրդ. Երեւանցին նախկինում լինելով Պօղոս Փիրոմալլու աշակերտներից եւ նրա հետ միասին Երեւանից փախչողներից էր, զգալով Փիլիպոս կաթողիկոսի եւ էջմիածնական կղերականների ատելութիւնն իրենց հանդէպ[2]:

1638 թ. Կարապետ վարդապետը Պոլսում էր, երբ Պոլսում ստացուեց կաթողիկոսի 1637 թ. Սեպտեմբերի 3-ի գրութիւնն ընդդէմ Փիրոմալլու եւ վերջինս, իր գրելով, ստիպուած էր Պոլսից Հռոմ ապաստանել Ոսկան Երեւանցու եւ Զաքարիա Աղամի հետ միասին[3]: Փիրոմալլու փախչելուց յետոյ, Կարապետ վարդապետը մնում է Պոլսում, հակառակ նրա որ ուսման պատճառով հետեւում էր իր ուսուցչին:

1641-1642 թթ. Պոլսի պատրիարք դարձաւ Կարապետ վարդապետի եղբայրը, Կիրակոս վարդապետը, որը, երբ վախճանուեց 1642 թ. Յունիսին, եւ դեռ չէր ընտրուել նրա յաջորդը, Գալանոսը 1642 թ. Յուլիսի 18-ին գրում էր Հաւատասփիւռի ժողովի

1 Տե՛ս **Մ. Կարապետեան**, *Յակոբ Գրիգորենց (1639-°)*,- «Հայաստանը եւ արեւելաքրիստոնեա-113; **Նոյնի**, *Առաքել արքեպիսկոպոս Երեւանի եւ Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցի*,- «ՀԱ», 2018, էջ 159-274; **Նոյնի**, *Կ. Պոլսի պատրիարքներ Թովմա Վրդ. Բերիացի (1603-1658) եւ Դաւիթ Բերիացի (°-1679)*,- «ՀԱ», 2019, էջ 297-394; **Նոյնի**, *Զաքարիա Աղամ (1611-1688)*,- «ՀԱ», 2020, էջ 181-228; **Նոյնի**, *Խաչատուր Գաղատացի Սսի Կաթողիկոս (1606-1674)*,- «ՀԱ», 2021, էջ 275-318

2 Այս մասին աւելի մանրամասն տե՛ս **Մ. Կարապետեան**, *Զաքարիա Աղամ (1611-1688)*,- «ՀԱ», 2020, էջ 184, ծանօթ. 10:

3 Տե՛ս SOCG, vol. 159, f. 171:

© National Library of Armenia

նախագահին, թէ հայ եկեղեցականները դիմել են իրեն, որոնց մէջ յատկապէս թէ՛ իր եւ թէ՛ հանգուցեալ Կիրակոս պատրիարքի աշակերտները, Կարապետ վարդապետի եւ նրա հօր՝ Յովհաննէս երէցի գլխաւորութեամբ, խնդրել են որ Պոլսում հաստատեն մի տեսակ վանք, ուր ապրեն կաթողիկէ հաւատքով, Հռոմի պապին ենթակայ, սրբագրելով հայկական ծիսական գրքերը, «ինչ որ ծրագրել էր Կիրակոս պատրիարքը»[4]:

Այս ծրագիրը իրագործելու ժամանակ իսկ չէր մնում, որովհետեւ պատրիարքական աթոռը գրաւուում է եւ սկսւում են հալածանքները Հռոմի համակիրների դէմ: 1642 թ. Օգոստոս 24-ին ֆրանսիական դեսպանի քարտուղար Lempereur-ը մի յանձնարարական նամակ է ուղարկում Հաւատասփիւռի ժողովի քարտուղար Ինկոլիին Կարապետ վարդապետի եւ Յովհաննէս Աբդալի համար, որպէս Կիրակոս պատիրարքի եւ Գալանոսի աշակերտներ, աւելացնելով թէ «երկուսն էլ շատ են ատուած հայերի կողմից»[5]:

Գալանոսն էլ իր հերթին, 1642 թ. Օգոստոսի 25-ին էր գրում Հաւատասփիւռի ժողովին, թէ «աշակերտներից երկուսը ուղղւում են Հռոմ, մեծը՝ տէր Կարապետ կրօնաւորը, ամուրի, հանգուցեալ Կիրակոս պատրիարքի եղբայրը, մինչ եղբայրը ողջ էր՝ ապահով էր զգում, բայց այժմ հալածուած է, մանաւանդ նոր՝ Դաւիթ պատրիարքից...: Խնդրում եմ միջոցներ գտնել, որ ապրի, իր լեզուին հմուտ անձ է, եթէ Հռոմի մէջ սովորի նաեւ ֆրանսերէն լեզուն՝ կարող է օգտակար լինել ս. ժողովին: Իր հայրն այստեղ ողջ է, յաջորդաբար ուզում է իրեն էլ Հռոմ կանչել»[6]:

բ. Ճանապարհ դէպի Հռոմ

Կարապետ վարդապետը Պոլսից Հռոմ ուղեւորուելիս, ճանապարհին անցնում է Վենետիկով, ուր, ամենայն հաւանականութեամբ Հաւատասփիւռ ժողովի կարգադրութեամբ, իրեն յանձնուած պիտի լինէր հայոց եկեղեցին: Գալանոսը 1643 թ. Ապրիլի 22-ին Պոլսից գրելով Հաւատասփիւռի քարտուղարին, շնորհակալութիւն է յայտնում նման կարգադրութեան համար[7]: Սակայն Կարապետ վարդապետին շուրջ մեկ տարի յետոյ (1643 թ. Սեպտեմբեր-Նոյեմբեր) գտնում ենք Հռոմում, ուր խնդրագիր է ներկայացնում հետեւեալ բովանդակութեամբ. «Պոլսի հանգուցեալ պատրիարքի եղբայրը, Կարապետը գիտէ հայերէն, թուրքերէն եւ մի քիչ էլ լատիներէն: Եղբօր մահից յետոյ եկել է Հռոմ միայն ու միայն աստուածաբանական ուսման համար եւ խնդրում է իրեն հոգ տանել»[8]: Այս անթուակիր խնդրագիրը զեկուցւում է Հաւատասփիւռի ժողովի 1644 թ. Դեկտեմբերի 28-ի նիստին եւ տրւում է ժխտական պատասխան. այն է՝ չի կարող մտնել Ուրբանեան վարժարան 30 տարեկանը լրացած լինելու համար[9]: Բախուելով ժխտական վերաբերմունքի, Կարապետը խնդրում է գոնէ ապրուստի միջոցը հոգալ, որովհետեւ խնդրագրի համաձայն «Փիրոմալլու ձեռքերի մէջ Հռոմին հնազանդութիւն խոստացայ եւ հայ հերձուածողներից հալածուեցի»[10]: Շատ հաւանաբար Հաւատասփիւռի ժողովը որոշ դրամական աջակցութիւն ցուցաբերած լինի Կարապետ վարդապետին, որ ձայնն այլեւս չենք լսում 1644-1647 թուականներին[11]:

գ. Ուսանողական շրջանը Հռոմում.

Երեք տարի լռութիւնից յետոյ Կարապետ վարդապետը դարձեալ խնդրագիր է ներկայացնում գրուած մի չեշտով, որ ընթերցողի քիմքին հաճելի լինի եւ դրական պատասխան ստանայ: Ցիշում է Երեւան քաղաքից լինելը եւ թէ Պոլսի Կիրակոս պատրիարքի եղբայրն է, որ ինչպէս ենթադրւում է թունաւորուել է հայ հերձուածողների ձեռքով, որոնք ատելութեամբ են լցուած կաթողիկէների հանդէպ: «Տեղեկանալով որ մայրենի լեզուով Հռոմում դասաւանդւում է աստուածաբանութիւն, եկել է խնդրելու ընդունել Ուրբանեան վարժարան, կամ իրեն ամսական թոշակ սահմանուի»[12]:

Այս անթուական խնդրագիրը ներկայացւում է Հաւատասփիւռի ժողովի 1647 թ. Մարտի 27-ի նիստին, գումարուած Իննոկենտիոս Ժ. պապի ներկայութեամբ, ուր որոշւում է Կարապետ վարդապետին երկու տարուայ համար տրուի վեց սկուդ վճար, որպէսզի Կղեմէս Գալանոսի մօտ հայերէն լեզուով սովորի բարոյական աստուածաբանութիւն[13]: Նոյն օրերին Կղեմէս Գալանոսի դասերին էին յաճախում Յովհաննէս Աբդալն ու Բալասանը. Կարապետ վարդապետը դառնում է երրորդ աշակերտը:

Այս շրջանում, հաւանաբար, դժուարութիւններ են առաջացել Հաւատաքննութեան կողմից Կարապետ վարդապետի պատարագելու հարցի հետ կապուած: Տարակուսանքներ է առաջացրել նրա ձեռնադրութեան վաւերականութեան կամ օրինականութեան հարցը: Հաւատասփիւռի քարտուղարը 1647 թ. Մայիսի 29-ին գրում է Հաւատաքննութեան ժողովին ի պաշտպանութիւն Կարապետ վարդապետի, ասելով թէ հայկական ձեռնադրութեան բնագիրը աւելի մօտ լինելով լատինականին շատ աւելի հարազատ է քան յունական ծէսինը, եւ որով Ուրբանոս Ը. պապի ժամանակ լեհահայոց առաջնորդ 22-ամեայ Նիկոլ Թորոսովիչի ձեռնադրութեան ժամանակ ամենեւին հարցեր չեն առաջացել: Իսկ ներկայ պապի ջրօք յանձնարարական գիր եւ իշխանութիւն տրուեց, որ նոյն Նիկոլ արքեպիսկոպոսը հայկական ծէսով ձեռնադրի Ուրբանեան վարժարանի աշակերտներից Զաքարիա Աղամին: Այս պատճառաբանութեամբ, Ինկոլին յարմար է տեսնում որ Կա-

4 Տե՛ս SOCG, vol. 167, f. 149:

5 Տե՛ս SOCG, vol. 168, f. 178:

6 Տե՛ս SOCG, vol. 168, f. 323: Յովհաննէս երէցը Կիրակոս պատրիարքի եւ Կարապետ վարդապետի հայրն էր: Սրան եւս կարելի է համարել Փիրոմալլու աշակերտ, որ Երեւանից Պոլիս փախչելով, 1637 թ. Դեկտեմբեր 12-ին գրում է Հաւատասփիւռի ժողովի նախագահին. «Երեկ Պոլիս հասաւ Կիրակոսի հայրը, ամուսնացած քահանայ, տարիքով եւ հասուն բարքով, սքանչելի իմացականութեամբ եւ պերճախօս, շատ հմուտ իրեն գրաւելու ամբոխը, այդպէս սկսել էր զանազան քաղաքներում, ինչպէս Բարսումայի մէջ: Սա իր ծախսով իր մօտ կանչեց Ոսկան վարդապետին, որ դրամ չունենալու պատճառով Էրզրում էր մնացել եւ կարծում եմ, որ վաղը կամ միւս օրը այստեղ կը հասնի, Իզմիտից ծովային ճանապարհով գնալու համար: Սրանք մեծ նեղութիւն եւ հալածանք կրեցին, որովհետեւ Յունիսին փախան Երեւանից եւ շրջեցին Վրաստանում, ազատուելու համար Երեւանից եկած հրահանգից» (տե՛ս SOCG, vol. 159, f. 177): Յովհաննէս երէցը հազիւ Պոլիս հասած, 1637 թ. Դեկտեմբեր 25-ին գրում է իր հնազանդութեան գիրը Ուրբանոս Ը պապին՝ թէ Փիրոմալլիից է սովորել ճշմարտութիւնը եւ թէ «Քրիստոս է գլուխ ամենայն քրիստոնէից եւ ի բաց բարձաք զհայն եւ զֆրանկն... այժմ կատարեալ հնազանդութեամբ հնազանդիմ կաթուղիկէ եկեղեցւոյդ» (տե՛ս SOCG, vol. 180, f. 300): 1638 թ. Յունուարի 8-ին Փիրոմալլին Պոլսից գրում է Ուրբանոս պապին թէ «ահա ուղարկում եմ Ձերդ սրբութեանը Կիրակոս վարդապետի հօր տէր Յովհաննէսի հնազանդութեան գիրը, ինչպէս նաեւ Ոսկան վարդապետինը» (տե՛ս SOCG, vol. 159, f. 178): Հաւատասփիւռի ժողովի 1638 թ. Մարտի 22-ի նիստին զեկուցւում են թէ՛ Փիրոմալլիի նամակները եւ թէ՛ Հռոմ ուղարկուած հաւատոյ դաւանութեան զոյգ գրութիւնները (տե՛ս Acta, vol. 13, f. 63, n. 35):

7 Տե՛ս SOCG, vol. 168, f. 316:

8 Տե՛ս SOCG, vol. 408, f. 136:

9 Տե՛ս Acta, vol. 16, f. 206, n. 31:

10 Տե՛ս SOCG, vol. 407, f. 353:

11 Կարապետ վարդապետի խնդրագրի կողքին դիւանում հանդիպում ենք մի այլ փաստաթղթի, ուր ասւում է թէ Պոլսի պատրիարքի եղբօր (իմա՛ Կարապետի) հետ Հռոմ ուխտի են եկել եւ հայրենիք վերադառնալու դրամը սպառուած լինելով, նպաստ են խնդրում: Այս խնդրագիրը ստորագրողներն են հայ կաթողիկէներ (Armeni cattolici) Thomaso di Gavasit, Temnisis di Murat, Giovanni de Meligian, Artisio di Arachel, Agapiri Cacciatore di Domico (տե՛ս SOCG, vol. 407, f. 352):

12 Տե՛ս SOCG, vol. 414, f. 5, 6; vol. 415, f. 300:

13 Տե՛ս Acta, vol. 17, f. 385, n. 7:

© National Library of Armenia

բապետ վարդապետին հրաման տրուի պատարագելու հայերէն լեզուով, Հռոմում սրբագրուած խորհրդատետրի վրայ, ս. Մարիամ Եգիպտացի հայոց եկեղեցում, ուր պատարագել էր Պոլսի հայոց Յովհաննէս Խուլ պատրիարքը[14] միայն հաւատոյ դաւանութիւն անելով եւ տալով անկանոնութիւնների արձակում[15]:

Կարապետ վարդապետին տրւում է ուսանողութեան երկամեայ մի շրջան. մինչ երեք տարի յետոյ ներկայացուած մի խնդրագրից տեղեկանում ենք թէ շուրջ 11 ամիս հիւանդ լինելով, խնդրում է ուսման հրամանագրի եւ թոշակի երկարաձգում, ինչպէս նաեւ Հռոմում ամառուայ շոգերից մաշուած զգեստի ձեռքբերում[16]:

Հաւատասփիւռի ժողովից ստացած նոր կարգադրութեամբ Կարապետ վարդապետի ուսանողութեան շրջանն աւարտւում էր 1651 թ. Փետրուար 13-ին: Ինչպէս Հռոմում բնակուող շատ հոգեւորականներ միշտ ջանացել են գտնելու որեւէ օրինաւոր տիտղոս՝ Հաւատասփիւռի ժողովից որոշ թոշակ, այնպէս էլ Կարապետ վարդապետը դարձեալ ներկայացնում է խնդրագրեր, պարզաբանելով թէ ուսման ծրագիրն ամբողջացնելու համար դեռ կարօտ է 5-6 ամսուայ եւ նոյն խնդրագրի ստորեւ Կղեմէս Գալանոսն էլ յաւելել է հետեւեալ յանձնարարականը. «վեց ամսից աւարտւում է դասընթացը. լաւ յատկութիւններով օժտուած անձ է եւ լիովին յարած Հռոմէական աթոռին: Ս. ժողովը կարող է մի օր մեծ օգուտներ ակնկալել նրանից: Կարելի է վեց ամիս էլ երկարաձգել թոշակի վճարումը»[17]: Խնդրագիրը զեկուցւում է Հաւատասփիւռի 1651 թ. Ապրիլ 24-ի նիստին, որի արձանագրութիւնների համաձայն, բաւարարում են խնդրանքը, վստահելով Գալանոսի տուած վկայագրին[18]:

դ. Կարապետ վարդապետը եւ Սարգիս Մանուկը

Զգիտենք թէ Հայաստանի որ բնակավայրից, սակայն 1645 թուականից ի վեր Հռոմում ենք գտնում Սարգիս անունով մի հայ մանուկ, «որ հայ վաճառականների հետ յարաբերութիւններ չունենալով՝ մոռացել էր մայրենի լեզուն»[19]: Հաւատասփիւռի ժողովի 1647 թ. Հոկտեմբերի 14-ի արձանագրութիւնում ընթերցում ենք, թէ դրուել է որբանոց, ամիսը երկու սկուդ վճարով, որպէսզի դաստիարակուի եւ քերականութիւն սովորի: Նոյն նիստին որոշւում է, որ P. Lanvvio-ն բանակցի որբանոցի տեսչի հետ, որպէսզի Սարգիսը միւս որբերի հետ չմասնակցի թաղումներին, իր կրթութեանն աւելի նուիրուելու համար[20]:

1648 թ. Փետրուար 3-ի նիստին դարձեալ է խօսւում նոյն մանկան մասին, որ սկսել է մոռանալ հայերէն եւ թուրքերէն լեզուները, առաջադիմելով միայն լատիներէնի մէջ եւ որով առաջարկւում է երեք սկուդով մանուկն յանձնել Կարապետ վարդապետին, որպէսզի նրա օգնութեամբ վերյիշի մոռացած լեզուները, իսկ լատիներէնի ուսումը շարունակի վարժարանում[21]:

Շուրջ երկու տարի Սարգիսը մնում է Կարապետ վարդապետի մօտ, սովորելով հայերէն, թուրքերէն ու լատիներէն: Կարապետ վարդապետը մի առանձին գրութեամբ Հաւատասփիւռի ժողովին ներկայացնում է

14 Կ.Պոլսի Յովհաննէս Խուլ պատրիարքի Հռոմ ապաստանելու պատճառների եւ տուած հաւատոյ դաւանութեան մասին տե՛ս **Կարապետեան, Մ. Մ.**, *Հռոմի հայ գաղթօջախի պատմութիւնից.*- «Պատմա-բանասիրական հանդէս», 1998, № 1-2, էջ 173-174: Նոյն տեղում տե՛ս նաեւ նրա տապանագիրը:

15 Տե՛ս SOCG, vol. 292, f. 447:

16 Տե՛ս Congregazioni Particolari, vol. 6, f. 324-325; f. 342-343:

17 Տե՛ս SOCG, vol. 292, f. 456:

18 Տե՛ս Acta, vol. 20, f. 41, n. 5:

19 Տե՛ս SOCG, vol. 415, f. 138:

20 Տե՛ս Acta, vol. 17, f. 532, n. 16:

21 Տե՛ս Visite e Collegi, vol. 29 (առանց էջադրման); Acta, vol. 18, f. 37, n. 4:

կացութիւնը, առաջարկելով որ նրան այսուհետեւ ընդունել Ուրբանեան վարժարան[22]: Հաւատասփիւռի 1649 թ. Դեկտեմբերի 7-ի նիստում որոշւում է բարձրացնել Սարգիսի թոշակը 3,4 սկուդի[23], սակայն նրա անունը այդպէս էլ չենք գտնում Ուրբանեան վարժարանի աշակերտների ցանկում եւ կորցնում ենք նրա հետքերը:

Ե. Կարապետ վարդապետը Երեւանի (Մեծ Հայքի եւ Վրաստանի) միսիոներ

Կարապետ վարդապետը, հինգ տարի Կղեմէս Գալանոսի մօտ հայերէն լեզուով աստուածաբանութիւն սովորելուց յետոյ, հետեւեալ խնդրագիրն է ներկայացնում Հաւատասփիւռի ժողովին. «Կարապետ վարդապետը... աւարտելով աստուածաբանութեան դասընթացը, պէտք է դառնայ իր հայրենիքը, Մեծ Հայք, Երեւան. խնդրում է որ իրեն այնտեղ ուղարկէք որպէս միսիոներ, նրանց նման որոնք մեծ թուով գտնւում են Վրաստանում: Ուղարկէք իրեն Մեծ Հայքում բնակուող հայերի համար որպէսզի նուիրուի իր ազգակիցներին դարձի բերելու դէպի կաթողիկէ հաւատքը: Նաեւ խնդրում է զգեստ, քանի որ մնացել է հայրենիքից բերած զգեստներով»: Այս խնդրագրի տակ հարկաւոր լուսաբանութիւններ է դրել նաեւ Կղեմէս Գալանոսը, որպէսզի Կարապետ վարդապետի գրածը ընդունելի լինի. «Խնդրագիր ներկայացնողը եղբայրն է Պոլսի Կիրակոս պատրիարքի, որ Ուրբանոս Ը. պապի օրօք միացաւ Հռոմէական եկեղեցուն: Ես իրեն Պոլսից եմ ճանաչում, ու այդ ժամանակից մինչեւ այսօր միշտ ցուցաբերել է մեծ սէր ս. աթոռի հանդէպ եւ իր եղբօր օրինակով՝ հակառակ է հերետիկոսութիւններին: Խելացի ու լաւ բարքերով երիտասարդ է, այստեղ միշտ ինձ է խոստովանել, պատարագելով սրբագրուած բնագրի վրայ: Աստուածաբանական կրթութիւնը հայերէնով աւարտեց շատ մեծ առաջադիմութեամբ, որով յարմար եմ տեսնում որ ս. ժողովի համար միսիոներ դառնայ»[24]: Հաւատասփիւռի 1651 թ. Յուլիսի 18-ի նիստին վճռւում է որ Կարապետ վարդապետը լինի ս. ժողովի միսիոները թէ՛ Երեւան քաղաքի եւ թէ շրջակայքում գտնուող հայերի համար[25]:

Իր կատարելիք առաքելութեանը պատրաստուելուց յետոյ Կարապետ վարդապետը խնդրում է Հռոմում տպուած մի շարք գրքեր, ոչ թէ մեկ, այլ բազմաթիւ օրինակներ. «որպէսզի դրանք տարածի հայոց մէջ»: Դրա համար ներկայացուել է երկու խնդրագրեր, միմեանցից տարբեր գրացանկերով. այսպէս՝ «Գալանոսի Պատմութեան գրքերից 10 օրինակ, Քերականութիւն՝ 20 օրինակ, Քրիստոնէական մեծ (հայերէն լատիներէն)՝ 10 օրինակ, Քրիստոնէական փոքր՝ 40 օրինակ, Յովհաննէս Մոլինոյի թուրքերէն բառարանից՝ 6, Տոմար Գրիգորեան՝ 6, թուրքերէն քերականութիւն՝ 6 օրինակներ»[26]: Նոյն խնդրագրի երկրորդ օրինակում աւելի նուազեցուել են գրքերի թուերը. սակայն Կղեմէս Գալանոսը նոյն թղթի վրայ գրում է Հաւատասփիւռի ժողովին. «ս. ժողովը պէտք է սա յարմար առիթ համարի եւ շնորհի գրքերը, որպէսզի տարածուեն Հայաստանում, մանաւանդ որ նման առիթներ յաճախ չեն պատահում»[27]: Հաւատասփիւռի ժողովի 1651 թ. Օգոստոսի 28-ի նիստում որոշւում է շնորհել փափագելի գրքերը[28]: Բայց քանի որ Հռոմի ուղիղ իր առաքելավայրը մեկնելը դժուար էր լինելու, Կարապետ վարդապետը մի համառօտ խնդրագրով զեկուցում է Հաւատասփիւռի ժողովին թէ մինչեւ 1651 թ. Օգոստոսի 12-ը ստացել է ամսական վեց

22 Տե՛ս SOCG, vol. 361, f. 84:

23 Տե՛ս Acta, vol. 19, f. 290, n. 6:

24 Տե՛ս Congregazioni Particolari, vol. 6, f. 790:

25 Տե՛ս Acta, vol. 20, f. 81, n. 10:

26 Տե՛ս SOCG, vol. 292, f. 278:

27 Տե՛ս SOCG, vol. 292, f. 446:

28 Տե՛ս Acta, vol. 20, f. 99, n. 18:

© National Library of Armenia

սկուդ եւ խնդրում է որ թոշակը երկարաձգուի մինչեւ մեկնելը[29]: 1651 թ. Նոյեմբերի 20-ի Հաւատասփիւռի նիստին որոշւում է ամսական թոշակը երկարաձգել միայն երկու ամսով[30]:

Կարապետ վարդապետը առաքելութեան մեկնելուց առաջ մի տհաճ անակնկալի պատճառով բանտարկւում է, որի պատճառը չգիտենք: Ունենք մի անթուական խնդրագիր ուղղուած Իննոկենտիոս Ժ. պապին, ուր ներկայացնում է իրեն, իբր Կիրակոս պատրիարքի եղբայր, որ Ուրբանոս Ը.-ին հաւատոյ դաւանութեան գիր էր ուղարկելու ապա շարունակում է. «Ես որ երկար տարիներ Հռոմում ապրեցի, աշակերտելով Ուրբանեան վարժարանում եւ ս. ժողովի կողմից նշանակուել էի Հայոց միսիոներ եւ մեկնելու էի առաքելութեան, գերապայծառ Oreggio-յի գրգռութեամբ բռնուեցի, եւ բանտարկուեցի, մեծ ամօթ ու նախատինք կրելով յատկապէս իմ ազգակիցների առաջ: Սակայն դիմեցի ս. ժողովին եւ փաստաբանի օգնութեամբ անմեղութիւնս ապացուցուեց եւ ազատուեցի»[31]:

Կարապետ վարդապետի բանտարկութեան շարժառիթները յստակեցնելու նպատակով, կարող է որոշ լոյս սփռել Կղեմէս Գալանոսի մի գրութիւնը ուղղուած Հաւատասփիւռի քարտուղար Massari-ին, ուր պարզաբանւում է մի հարց կարդինալ Oreggio-ի մասնակցութեամբ: Գալանոսի անթուական գրութիւնը հաղորդում է. «Կարդինալ Ursino-ն ինձ ուղարկեց Պատարագամատոյցը, ստիպելով որ աշակերտներն այն գործածեն: Ես հնազանդուելով հրամանին կատարեցի պարտականութիւնս, սակայն աշակերտները իմ կարծիցս աւելի յամառ գտնուեցին: Զկիրառելու համար շատ պատճառներ առաջ բերեցին, որոնցից յատկապէս երկուսը՝ թէ այս բոլորը Mons. Oreggio-յի պարտադրանքով ու բռնութեամբ է թելադրուած եւ թէ հայերը իրեն ենթակայ չեն, այլ ս. Ժողովին: Ես պատասխանեցի թէ բռնութեան հարց չկայ, այլ հեղինակաւոր անձանց քաղցր յորդորանքի եւ ուզում են որ իմ ձեռքով լինի, որ այնքան տանջուել եմ ձեզ համար: Համոզուեցին, բայց կրկին երկու պատճառ բերեցին, ասելով թէ իրենց պատարագը Հռոմում վերածուել էր թատրոնի, ծաղրի ու սուլոցի: Թէ վերջերս պատարագել են եւ գայթակղութեան պատճառ դարձել, որով առիթ են հանդիսացել ուրիշների մահու չափ մեղանչելու, թէ հայերէն պատարագել նշանակում է հռոմէացի տիկինների եւ պարոնների տեսարանի պատճառ դառնալ եւ քառասնորդացի օրերից մինչեւ այսօր երեք անգամ պատարագել են, մինչդեռ յոյները տարին մի անգամ են պատարագում: Ես ցանկանալով իրենց հանդարտեցնել՝ խոստացայ միջնորդել, որպէսզի վերացուի պատարագի զանգակները, որ ծաղրի առարկայ են: Հաւանեցին, բայց ոչ ամբողջութեամբ: Իսկ երեկ եկան ասելու որ տեղի չեն տալու, եւ հրաման պիտի խնդրեն Card. Capponeից հայրենիք վերադառնալու, ասելով թէ mons. Oreggio-յի սպառնալիքները ահա իրականացան: Այսօր էլ եկան ինձ ասելու թէ պնդում են Հայաստան վերադառնալը»[32]:

Անհաւանական չէ, որ Կարապետ վարդապետը կարող էր որեւէ կերպ կապ ունենալ այս միջադէպի եւ նրա հանգուցալուծման հետ: Սակայն անհնար է պնդել տեղեկութիւնների բացակայութեան պատճառով:

զ. Կարապետ վարդապետը իր առաքելավայրում

Կարապետ վարդապետի առաքելավայր նշանակուած էր Երեւան քաղաքն ու իր շրջակայքը: Սակայն մտածելով որ այս վայրում ինքը կարող է անտէր ու առանձին մնալ, Հռոմից մեկնելուց առաջ խնդրագիր է ներկայացնում Հաւատասփիւռի ժողովին.

29 Տե՛ս SOCG, vol. 292, f. 454:
30 Տե՛ս Acta, vol. 20, f. 119, n. 17:
31 Տե՛ս SOCG, vol. 292, f. 419:
32 Տե՛ս SOCG, vol. 292, f. 457:

«Տէր Կարապետ հայ քահանան, որ ս. ժողովի կողմից նշանակուել է Մեծ Հայքի միսիոներ, նկատել է տալիս որ Վրաստանում գտնուող թէաթինեանների առաքելավայրը արդէն իսկ տարածւում է մինչեւ Հայաստանի սահմանները, իսկ Տէր Կարապետը, եթէ հաւածուի՝ ինչը անտարակոյս պիտի տեղի ունենայ, Մեծ Հայքի կաթողիկոսի եւ հերձուածող հայ եպիսկոպոսներից, պիտի չիմանայ ում օգնութեանը դիմել եւ խորհուրդ հարցնել, խնդրում է իրեն մեծաւոր նշանակել նոյն թէաթինեան առաքելութեան մեծաւորին, տարածել նրա իշխանութիւնը նաեւ Հայաստանի վրայ, մանաւանդ որ Վրաստանի գաւառներում եւս մեծ թուով հայեր են ապրում»[33]: Կարապետ վարդապետի առաջարկը կէտ առ կէտ ընդունւում է Հաւատասփիւռի ժողովի 1652 թ. Փետրուար 26-ի նիստին, իրեն մեծաւոր նշանակելով Վրաստանի թէաթինեանների մեծաւորին, վերջինիս իրաւասութիւնը տարածելով նաեւ Հայաստանի վրայ[34]:

Մեր ունեցած յաջորդ վկայութիւնը դա Կարապետ վարդապետի իտալերէն նամակն է, ստորագրուած «Կարապետ աբեղա ծառայ Քրիստոսի» եւ գրուած Վրաստանից՝ Մինգրելիայից 1654 թ. Մարտի 20-ին, ուր շնորհակալութիւն յայտնելով Հաւատասփիւռի ժողովին, որ Կղեմէս Գալանոսի միջոցով իրեն է հասել 1653 թուականի 60 սկուդ թոշակը, խնդրում է նոյնը յաջորդապէս շարունակել: Ապա խօսում է իր առաքելութեան մասին, այսինքն՝ «նուիրուել եմ Հայոց մէջ իմ պաշտօնին, որոնք շատ են եւ գտնւում են երկու իրարից հեռու վայրերում, որոնցից մեկը ունի մի քահանայ, իսկ երկրորդը թէեւ ունի, սակայն ամէն կերպ կախեալ է իրենից եւ ես եմ անում արարողութիւնները իր եկեղեցում: Դիմացս որեւէ արգելք չունեմ, դիմացս գործունէութեան դաշտը լիովին բաց է եւ բոլորը ցանկանում են ինձ իրենց տանը տեսնել: Շարունակելու եմ աշխատել առանց առիթը կորցնելու: Տեղի իշխանը շատ սիրով է հետս եւ յուսով եմ լաւ պտուղներ քաղել. գրածիս կարող են վկայել թէաթինեանները»[35]:

Հաւատասփիւռի ժողովի 1657 թ. Մարտի 27-ի նիստում Գալանոսի գրչութեամբ ներկայացւում է մի խնդրագիր Կարապետ վարդապետի կողմից: Ժողովի արձանագրութիւնում ասւում է. «Ուրբանեան դպրոցի աշակերտ Տէր Կարապետ քահանան, որ այժմ միսիոներ եւ ժողովրդապետ է Քալաքիս (Calachis) քաղաքին[36], ուր բնակւում են Մինգրելիայի հայերը, որի առաքելութեանը վկայում են թէաթինեանները, անցեալ տարի աւարտած լինելով թոշակի հնգամեայ շրջանը, խնդրում է որ որոշումը վերանորոգուի՝ յաջորդ հինգ տարուայ համար եւս»: Ժողովի որոշումն է լինում՝ «թող նորոգուի»[37]:

Սրանով սպառւում են մեր ունեցած տեղեկութիւնները Կարապետ վարդապետի մասին: Գիտենք նաեւ, որ 1662 թ. Հոկտեմբերին նա արդէն վախճանուած էր: Հռոմում Յակոբ Գրիգորեան հայ քահանան 1662 թ. Հոկտեմբեր 3-ին ցանկութիւն է յայտնում Վրաստան գնալու, «ուր միսիոներ էր Կարապետ վարդապետը, որ այժմ մեռել է»[38]:

Սրանով սպառւում են մեր տեղեկութիւնները Կարապետ վարդապետ Երեւանցու մասին:

2. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲԴԱԼ

ա. Ուսանողական շրջան

Գալանոսը Կ.Պոլսից Հռոմ գալով Ուրբանեան վարժարանում չորս աշակերտնե-

33 Տե՛ս SOCG, vol. 292, f. 251:
34 Տե՛ս Acta, vol. 21, f. 15, n. 10:
35 Տե՛ս SOCG, vol. 210, f. 329:
36 Ամենայն հաւանականութեամբ նկատի ունի Ներկայիս Զուգդիդի քաղաքը:
37 Տե՛ս SOCG, vol. 292, f.f 455, 460:
38 Տե՛ս SOCG, vol. 223, f. 133:

© National Library of Armenia

րի կատարեց հաւատոյ դաւանութիւն, որոնցից երեքը փոխնիփոխ լքեցին վարժարանը եւ մնաց միայն Յովհաննէս Աբդալը: Գալանոսը, երեւում է, ի սկզբանէ աչք ունէր այս պատանու վրայ ու շատ վաղուց, այն է 1642 թուականի վերջից Պոլսից Հռոմ էր ուղարկել, մինչեւ ինքը Հռոմ մեկնեց 1643 թ. Յուլիսին: 1643 թ. Յունուարի 3-ին Վենետիկում թէաթինեան Antonio Corero-ն գրում է Հաւատասփիւռի ժողովին, թէ «Կղեմէս Գալանոսը Պոլսից ուղարկել է Յովհաննէս հայ պատանուն, որ ունէր Հռոմին ուղղուած յանձնարարական նամակներ: Սա եւս ընդունէք որպէս յանձնարարական [նամակ]»[39]:

Հաւատասփիւռի ժողովի դիւանում 1643 թ. Յունուարի 30-ով թուագրուած մի արձանագրութեան մէջ Յովհաննէսի մասին հաղորդւում է, թէ նա «սովորել է հայերէն քերականութիւն, տրամաբանութիւն. մի քիչ էլ իտալերէն գիտի, նկարագրով էլ բարի է»: Հաւատասփիւռի ժողովի կողմից որոշւում է մի փոքրիկ գումար յատկացնել, մինչեւ Հայոց համար վարժարան հիմնուի ու մինչ այդ տեղաւորել Հայոց Ս. Մարիամ Եգիպտացու հիւրանոցը[40]: Առաջին կիսամեակը (վեց ամսեակը) աւարտելուն պէս Յովհաննէս Աբդալը Հաւատասփիւռի ժողովից խնդրում է եւս վեց ամսով երկարացնել իր 3 սկուդ կազմող ամսականը, որպէսզի կարողանայ շարունակել իր ուսումը[41]:

Երբ Գալանոսի աշակերտները թողեցին Ուրբանեան վարժարանը, Յովհաննէսը մենակ մնաց: Ունենք մեկ անթուակիր խնդրագիր, գրուած ամենայն հաւանականութեամբ, 1645 թ. հոկտեմբերին, ուր ասում է. «Ուրբանեան դպրոցի աշակերտ Յովհաննէս Աբդալ (բնագրում՝ Addal) հայը արդէն հայերէնով սովորած լինելով կաթողիկէ հաւատքի վերաբերեալ գլխաւոր հարցերը, հրաման է խնդրում, եւս մի տարի նուիրուելու լատիներէնի քերականութեան ուսմանը. ժխտական պատասխանի պարագայում՝ խնդրում է ճանապարհածախս հայրենիք վերադառնալու համար»[42]: Ամենայն հաւանականութեամբ Յովհաննէսը մնում է Ուրբանեան վարժարանում, լատիներէնը կատարելագործելու համար եւ շուրջ երկու տարի յետոյ Յովհաննէսը նոր խնդրագիր է ներկայացնում Հաւատասփիւռի ժողովին. «երեք տարի եւ հինգ ամիս[43] այստեղ սովորեցի լատիներէն, այնքան որ կարող եմ ազգիս համար օգտակար գրքեր թարգմանել, սակայն ի վիճակի չեմ լատիներէնով փիլիսոփայական եւ աստուածաբանական ուսում կատարել: Հրաման եմ խնդրում, որ հայերէնով կարողանամ սովորել հայոց սխալները, որպէսզի օգտակար լինեմ ազգիս»: Նոյն խնդրագրի լուսանցքում Հաւատասփիւռի քարտուղարութիւնը թելադրանքի ոճով լուծում է առաջարկել. «կարելի է իրեն ամսական վեց սկուդ տալով Պրոպագանդայի վարժարանից դուրս դնել, որպէսզի Հայր Կղեմէս Գալանոսից սովորի փիլիսոփայական ու բարոյական աստուածաբանութիւնները, մեկուկէս կամ առաւելագոյնը երկու տարուց, ինչպէս արեց Զաքարիա [Աղամի] համար եւ ներկայումս անում է Բալասանի համար»[44]: Հաւատասփիւռի ժողովի 1647 թ. մարտի 27-ի նիստում հաստատւում է քարտուղարի այս թելադրանքը, պայմանով որ այլեւս չգործածի Պրոպագանդայի աշակերտական հագուստը, այլ աշխարհական քահանայի սքեմ հագնի[45]:

39 Տե՛ս SOCG, vol. 38, f. 331:
40 Տե՛ս SOCG, vol. 406, f. 66:
41 Տե՛ս SOCG, vol. 406, f. 163:
42 Տե՛ս SOCG, vol. 409, f. 453:
43 Ակնարկում է 1643 թ. հոկտեմբեր ամիսը, երբ ընդունուեց Ուրբանեան վարժարան եւ որով այս խնդրագիրը թուագրելի է 1647 թուականի փետրուար ամսով:
44 Տե՛ս SOCG, vol. 413, f. 266+279:
45 Տե՛ս Congregazione particolari, vol. 9, f. 142, n. 17:

1648 թ. մայիսի 13-ին Հաւատասփիւռի ժողովի նիստին հրաման է տրւում, որ Յովհաննէսը ստանայ սուրբ աստիճանները, ներառեալ քահանայական ձեռնադրութիւնը[46]: Նոյն տարուայ օգոստոսին Կղեմէս Գալանոսը գրում է մի ջատագովական նամակ իր աշակերտին, որի ամսականը, Հաւատասփիւռի ժողովի կողմից նուազեցնելու պատճառով, իր բնակութեան վայրը S. Andrea della Valle-ից (թէաթինեանների մայրատնից) փոխադրել էր Սուրբ Մարիամ Եգիպտացու Հայոց հիւրանոցը եւ որ արդէն երկու անգամ հասցրել էր հիւանդանալ: Գալանոսը գրում է. «նկատի ունենալով, որ սա միւս բոլոր հայ աշակերտներից աւելի երկար սովորեց լատիներէն, կարող է մեզ համար թարգմանութիւններ անել, սովորեց նաեւ իտալերէն եւ մեծ չափով օգտուեց աստուածաբանական ուսումից, աստուածաբանական հոգի է. նախկինում բազում զոհողութիւնների է գնացել իրեն (իմա՝ Գալանոսի) համար, լաւ կը լինի որ այժմ չնչին պատճառով չկորցնենք իրեն: Ուստի խնդրւում է օգնել իրեն դրամական կերպով...»[47]:

Հաւատասփիւռի ժողովը զանազան նիստերով միշտ ընդառաջել է Յովհաննէս Աբդալին, յաճախ դրամական նպաստներով, որպէսզի Գալանոսի մօտ ի վերջոյ աւարտի աստուածաբանական ուսումը: Ընդառաջելով Գալանոսի խնդրանքին 1648 թ. օգոստոսի 14-ի նիստում որոշում է շարունակել վճարել Յովհաննէսի ամսականը եւս հինգ ամիս, այն է մինչեւ 1649 թ. յունուարը[48]: Ժամանակն աւարտուելուն պէս Յովհաննէսը եւս վեց ամսուայ համար նոր կրթաթոշակ է խնդրում, միշտ նոյն պատճառաբանութեամբ՝ աւարտելու համար աստուածաբանական ուսումը[49]: 1649 թ. յունուարի 13-ի Հաւատասփիւռի նիստում ընդունւում է Յովհաննէսի խնդրանքը[50]: 1650 թ. մարտ ամսին Յովհաննէսը դարձեալ ներկայացնում է հին խնդրանքը այս անգամ երեք ամսուայ երկարաձգմամբ[51] եւ այս խնդրանքին եւս տրւում է դրական պատասխան, աջակցելու նրան ամբողջացնելու աստուածաբանական ուսումը[52]: Յաջորդ դրական նպաստը Յովհաննէսին յատկացւում է Հաւատասփիւռի 1650 թ. մայիսի 31-ի նիստով, վերջինիս քահանայական ձեռնադրութիւնը ստանալուց յետոյ, մինչեւ առաքելութեան մեկնելը, ամսական վեց սկուդ չափով[53]:

բ. Ձեռնադրութիւնը

1650 թ., երբ մօտենում էր Յովհաննէս Աբդալի քահանայական ձեռնադրութեան ժամկէտը, դժուարութիւններ առաջացան, քանի որ Յովհաննէսը չունէր ծննդեան, մկրտութեան եւ դրոշմուած լինելու մասին վկայականներ: Դարձեալ Կղեմէս Գալանոսն է, որ պաշտպանում է աշակերտին, Հաւատասփիւռի ժողովին տալով հետեւեալ վկայութիւնները. «Յովհաննէս Աբդալը շիկամօրուս երիտասարդը, որ շուրջ 28 տարեկան է, վաւերականօրէն մկրտուած է հայ քահանայի կողմից, որի մասին պէտք չէ տարակոյս առաջանայ եւ որով կարող է ստանալ ձեռնադրութիւնը: Բայց քանի որ հայերը մկրտութեան հետ տալիս են նաեւ դրոշմը, չգիտեմ նա ստացե՞լ է արդեօք դրոշմը: Հնարաւոր է թէական կերպով մի եպիսկոպոսից կրկին դրոշմուել, թէեւ դրոշմը էական չէ ձեռնադրութեան ժամանակ»[54]: Երկրորդ վկայականով Գալանոսը շեշտում էր. «խնդրում եմ դժուարութիւններ չյարուցել Յովհաննէսի ձեռնադրութեան առիթով, մկրտութեան վկայականի բացակայութեան

46 Տե՛ս Congregazione particolari, vol. 9, f. 229, n. 6:
47 Տե՛ս SOCG, vol. 417, f. 509:
48 Տե՛ս Congregazione particolari, vol. 9, f. 248, n. 1:
49 Տե՛ս SOCG, vol. 361, f. 88:
50 Տե՛ս Congregazione particolari, vol. 9, f. 270, n. 7:
51 Տե՛ս Congregazione particolari, vol. 6, f. 394:
52 Տե՛ս Acta, vol. 19, f. 338, n. 17:
53 Տե՛ս Acta, vol. 19, f. 365, n. 375:
54 Տե՛ս SOCG, vol. 292, f. 213:

© National Library of Armenia

համար, որովհետեւ չի կարելի այն բերել տալ արեւելքից, ուր կատարուած մկրտութիւնները գրի չեն առնւում. ուստի դուք եւս արգելքներ մի յարուցէք ձեռնադրութեան հրամանը տալու համար»[55]:

Քահանայական ձեռնադրութիւնը ստանալուց յետոյ, տէր Յովհաննէսը ապրելու համար պիտի թոշակաւորուէր Հաւատասփիւռի ժողովի կողմից, ապա նոր միայն պիտի մեկնէր քարոզութեան այնտեղ, ուր նրան կ՚ուղարկէր Հաւատասփիւռի ժողովը: Այս գործընթացը եւս խիստ կարգաւորուած ու մենաշնորհուած էր, եւ ցանկացած ձեռնադրեալի չէր տրւում: Դարձեալ միջամտում է Կղեմէս Գալանոսը, Հաւատասփիւռի ժողովին ներկայացնելով հետեւեալ վկայագիրը. «Վկայում եմ, Յովհաննէս Աբդալի համար, որ եօթ տարի աշակերտել է Ուրբանեան վարժարանում եւ Կ.Պոլսից սկսեալ լինելով հոգեւոր որդիս, իրեն ճանաչում եմ տաս տարուց ի վեր: Նա օրինական եւ բնական որդին է պոլսեցի Սիմոն հայի, շուրջ 28 տարեկան, բարի վարքով կաթողիկէ է: Մշտապէս յաճախել է ինձ սուրբ խորհուրդները ընդունելու, ջերմ ցանկութիւն ունի տարածելու կաթողիկէ վարդապետութիւնը իր ազգի մէջ: Գիտի հայերէն, արաբերէն, թուրքերէն, լատիներէն եւ իտալերէն: Հայերէնով իմ մօտ սովորեց ոչ միայն տրամաբանութիւնը, այլեւ փիլիսոփայութիւնն ու աստուածաբանութիւնը, յատկապէս ս. Թովմա Աքուինացու առաջին տասնմեկ հարցերը, երանական տեսութիւնը, Աստծու կամքի, գիտութեան եւ կարողութեան ճառը, Երրորդութեան, մարդեղութեան, հաղորդութեան ճառերը, յաղագս հրեշտակաց, ընդհանուր ս. խորհուրդների եւ այլ բարոյական հարցերը: Ուստի յարմար եմ տեսնում, որ Հաւատասփիւռի ժողովի կողմից ուղարկուի առաքելութեան»[56]: Այս վկայականը թուագրուած է 1650 թ. յունուար 18-ով:

Նոյն ոգով մի այլ վկայական էլ տուել է Ուրբանեան վարժարանի տեսուչը՝ P. Sebastian-ը, 1650 թ. յունուարի 27-ով թուագրուած, Յովհաննէսի համար վկայելով թէ «շատ բարի յատկութիւններ ունի»[57]:

Տէր Յովհաննէսը պատրաստւում է մեկնելու քարոզութեան ու Հաւատասփիւռի ժողովից խնդրում է մի շարք գրքեր, որոնց մէջ յատկանշական էին բացի Հռոմէական ժամագրքից, Խորհրդատետրից եւ Մաշտոցից, «Ընդհանուր (իմա՛ տիեզերական) ժողովների պատմութիւնը», որի համար աւելացնում է. «այս վերջինս շատ կարեւոր է, քանի որ հայերն ընդունում են միայն առաջին երեք ժողովները»[58]:

գ. Յովհաննէս Աբդալի առաքելութիւնը Երուսաղէմում եւ Կիլիկիայում

Յովհաննէս Աբդալի առաքելական գործունէութեան պատկերը հետեւեալն է: 1651 թ. մայիսի 25-ին նա գտնւում էր Հալէպում, դէպի Կիլիկիա մեկնելու ճանապարհին[59]: 1651 թ. սեպտեմբերի 6-ին Սայիտայից տեղեկացնում է թէ գնացել է Երուսաղէմ, ծնողների մօտ «հոգալու նրանց հոգիների փրկութիւնը, բացատրելով կաթողիկէ հաւատքը. նրանք որ բարի հոգի ունէին՝ դարձի եկան, չունեցողները՝ մնացին... շատ նեղութիւններ կրեցի կաթողիկէ լինելուս համար, ինձ հալածեցին որպէս Լեւոն [պապի] հետեւորդ»[60]: Հաւատասփիւռի ժողովի 1653 թ. դեկտեմբերի 16-ի նիստին զեկուցւում է Տէր Յովհաննէսի Երուսաղէմի քարոզիչ լինելու ցանկութիւնը, որին տրւում է բացասական պատասխան իրեն իբրեւ առաքելավայր նշանակուած էր

55 Տե՛ս SOCG, vol. 292, f. 442:
56 Տե՛ս SOCG, vol. 292, f. 212:
57 Տե՛ս SOCG, vol. 292, f. 214:
58 Տե՛ս SOCG, vol. 292, f. 228 եւ 448:
59 Տե՛ս SOCG, vol. 292, f. 302:
60 Տե՛ս SOCG, vol. 292, f. 303:

Հայաստանը[61]: 1654 թ. յունուար 13-ի նիստով հրաման է տրւում, որ Տէր Յովհաննէսը Կիլիկիայից փոխադրւում է Հալէպ, քանի որ չէր դիմացել հայերի յարուցած հալածանքին[62]: 1656 թ. նոյեմբերի 22-ի Հաւատասփիւռի ժողովի նիստում ընդունւում է Տէր Յովհաննէսի խնդրանքը յաջորդ հինգ տարիների համար վերանորոգել միսիոներական հրամանագիրը տարեկան 60 սկուդ գումարով[63]: 1657 թ. սեպտեմբերի 18-ին Յովհաննէս Աբդալը Երուսաղէմից գրում է Հաւատասփիւռի նոր քարտուղարին, ողջունելով նրա նոր պաշտօնը, խնդրում է վերջինիս իր անձի, գործունէութեան ու գրածների մասին տեղեկութիւնները ստանայ Կղեմէս Գալանոսից[64]:

դ. Հալէպ. Խաչատուր Գաղատացի կաթողիկոսի հետ

Նոյն տարիներին Հալէպում Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռ էր բարձրացել Խաչատուր Գ. Գաղատացի (1657-1674) ճանաչուած Մինտէրճի անունով. որ նախկինում, 1642 թ. Կ.Պոլսում յաջորդել էր Կիրակոս պատրիարքին: Երկու պատրիարքներն էլ Պոլսում Կղեմէս Գալանոսի մտերիմներն էին, ակնյայտօրէն որոշակի յարում դրսեւորելով Հռոմի աթոռին: Հալէպում Ֆրանսիական հիւպատոս Պիքէն եւ լատին միսիոներները կրկին յուսադրուեցին եւ սկսեցին ծրագրեր մշակել, որ Խաչատուր կաթողիկոսը կրկին յարի Հռոմի աթոռին եւ իրականանայ եկեղեցիների միութիւնը: Իրենց այս քաղցր երազն իրականութեան վերածելու համար մտածում էին Երուսաղէմից Հալէպ կանչել Տէր Յովհաննէս Աբդալին, որպէսզի նրա ձեռքով հասնէին իրենց ակնկալած արդիւնքին:

Մեր տրամադրութեան տակ ունենք Տէր Յովհաննէս Աբդալի իտալերէն մի անթուական նամակ, ուր նկարագրում է այս բոլոր մանրամասնութիւնները, որոնց փորձենք անդրադառնալ ստորեւ:

Տէր Յովհաննէսը Հալէպ հասնելուն պէս, Ֆրանսիական հիւպատոս Պիքէն եւ լատին միսիոներները ստիպում են իրեն ներկայանալ Խաչատուր կաթողիկոսին, քանի որ վերջինիս մէջ բարի ցանկութիւններ էին նկատել: Տէր Յովհաննէսը դեռ Պոլսից ճանաչելով Խաչատուրի բնութիւնը, ակամայ ներկայանում է կաթողիկոսին, որը սիրայօժար ընդունելով նրան, առաջարկում է համագործակցութիւն եւ նոյնիսկ առաջարկում է փոխել տարազը եւ գործածել վեղարը: Տէր Յովհաննէսը դժուարութիւններ չի հանում եւ ընդունում է առաջարկը, միաժամանակ նշմարելով, որ Խաչատուր կաթողիկոսի այս գործելակերպը զուտ շահադիտական նպատակներ ունի. այն է [կաթողիկէ ձեւանալով] Ֆրանսիական հիւպատոսից շօշափելի գումար ձեռք բերել եւ ուրիշ ոչինչ: Տէր Յովհաննէսին արգելում է խօսել Հռոմի եկեղեցու մասին կամ ի նպաստ, որպէսզի հայոց մէջ տարակուսանքներ չարթնանային եւ չծագէր որեւէ խառնակութիւն:

Շուրջ եօթ ամիս Տէր Յովհաննէսը մնում է Խաչատուր կաթողիկոսի մօտ, մանաւանդ որ քաղաքը պաշարուած էր Հասան փաշայի կողմից: Մնում էր առանց խօսելու հաւատքի ճշմարտութիւնների մասին ու Յովհաննէսի մօտ այն համոզումն է առաջանում, որ բոլոր հարցերը (նիւթը) բաւականին հասկանում էր, բայց քաղաքավարութիւն չէր ուզում ի ցոյց դնել թէ պարտուած է, ուստի անընդհատ դժուարութիւններ եւ հարցումներ էր ուղղում, ինչ որ յատուկ է

61 Տե՛ս Acta, vol. 22, f. 136, n. 2:
62 Տե՛ս Acta, vol. 23, f. 7, n. 42:
63 Տե՛ս SOCG, vol. 292, f. 503; 507:
64 Տե՛ս SOCG, vol. 222, f. 8: Նոյն թղթի վրայ (f. 11) քարտուղարը գրել է հետեւեալ ծանօթութիւնը. «Հայր Կղեմէսն ասում է թէ Տէր Յովհաննէսը եղել է թէ Ուրբանեան վարժարանի եւ թէ իր աշակերտը եւ թէ շատ լաւ քահանայ է»:

© National Library of Armenia

հրեաներին եւ այլ հերետիկոսների, որոնք երբ իրենց պատճառաբանութիւններում նեղն են ընկնում, իսկոյն թողնում եւ փոխում են նիւթի թեման: Ճիշտ է, որ ինքը Հռոմէական եկեղեցու մոլի հալածողներից չէ (ես իր հետ Պոլսում աշակերտել եմ մեծարգոյ հայր Կղեմէս Գալանոսին, երբ Քեբականութեան եւ տրամաբանութեան դասեր էինք ստանում), բայց ոչ էլ պաշտպան է եւ կամ՝ միութեան համակիր: Սրա պատճառը իր ներկայ կարգավիճակն է եւ կաթողիկոսական արժանապատուութիւնը (dignità patriarcale), քանի որ կարող էր առաջացնել յուզումներ ու խառնակութիւն:

Պիքէն եւ միսիոներները ցանկանում են, որ Տէր Յովհաննէսը աւելի համարձակօրէն խօսէր ու քարոզէր հայոց սխալների դէմ եւ իրեն լուր տարածեն թէ եկեղեցիները միացել են եւ նոյն այդ լուրը գրեն քրիստոնեայ աշխարհին եւ Հռոմի սուրբ աթոռին, իբր թէ կաթողիկոսը դարձի էր եկել եւ կատարել էր եկեղեցիների միութիւնը:

Խաչատուրը ցանկանում էր, որ Տէր Յովհաննէսը մնար իր մօտ, որպէսզի հիւպատոսի աչքում եկեղեցիների միութեանը տրամադիր երեւար ու ձեռք բերէր ակնկալած գումարը: Երբ կաթողիկոսը երկար ճանապարհորդութեան համար Յովհաննէսին առաջարկեց իրեն ընկերանալ (ուղեկցել), կրկին մտադիր էր ֆրանսիական հիւպատոսին միութեան յոյսեր ներշնչելը: Տէր Յովհաննէսը նախընտրեց չմեկնել ու մնալ քաղաքում: Սակայն Յովհաննէսը լաւ աչքով չէր դիտուած հայ ժողովրդի կողմից եւ կաթողիկոսը իրեն ժողովրդի մէջ թողնելով կարող էր ժողովրդին անհաճոյ (տհաճ) բան կատարած լինել. ուստի անում է երկու առաջարկ. Տէր Յովհաննէսը պիտի իր դէմ տհաճ մի բան արած լինէր եւ կամ ֆրանսիական դեսպանը իրեն պիտի խնդրէր որ Յովհաննէս մնար ժողովրդի մէջ: Այս կերպ կաթողիկոսը պիտի արդարանար ժողովրդի առաջ, իբր ֆրանսիական դեսպանի ճնշման տակ էր նման որոշում ընդունուել: Ի վերջոյ, Տէր Յովհաննէսն ապաստանում է հիւպատոսի կեցավայրում եւ հարցը վերջնականապէս փակւում է[65]:

Տէր Յովհաննէսի այս ընդարձակ նամակը լինելով անթուական, դժուար է կռահել այս դիպուածի ժամանակը: Թւում է, թէ սա կարող էր պատահել Խաչատուր կաթողիկոսի գահակալութեան առաջին տարիներին, 1657 թ., քանի որ նախորդ տարում Տէր Յովհաննէսը Հաւատասփիւռի ժողովին ցանկութիւն էր յայտնել Երուսաղէմից Հալէպ անցնել եւ 1656 թ. նոյեմբերի 22-ի նիստին իրեն դրական պատասխան էին տուել: Անշուշտ, որոշումը կայացնելիս հաշուի էր առնուել Հալէպի ֆրանսիական հիւպատոսի եւ տեղի միսիոներների միջամտութիւնը[66]:

Ե. Հալէպ. ատտուածային հաղորդակցութիւն

Յաջորդ նամակներից տեղեկանում ենք, որ Տէր Յովհաննէսը դարձեալ դժուարութիւնների մէջ էր յայտնուել, այս անգամ ատտուածային հաղորդակցութեան հարցով: Տէր Յովհաննէսը 1659 թ. ապրիլի 18-ին Հալէպից գրում է Հաւատասփիւռի ժողովին, շատ համառօտ կերպով ներկայացնելով ունեցած դժուարութիւնները[67]: Անկասկած գրած պիտի լինէր նաեւ իր ուսուցչին՝ Կղեմէս Գալանոսին, որ Տէր Յովհաննէսի կողմից մի խնդրագիր է բանաձեւում, հետեւեալ բովանդակութեամբ. «Հայոց պատարագի ընթացքում յիշատակւում են իբրեւ սրբեր անձեր, որոնք սուրբ կոչուելու արժանի չեն (Թէոդորոս Թագաւոր, Պարսամ...), տարուայ ընթացքում զանազան անգամներ երգւում է մի շարական («Ով հրաշալի») ուր հայհոյւում է ս. Լեւոնը եւ Քաղկեդոնի ժողովը: Այսպիսով Տէր Յովհաննէսը հրաման է խնդրում որպէսզի ֆիզիկապէս ներկայ գտնուի հայոց բարձր

65 Տե՛ս SOCG, vol. 225, f. 18-19+22-23:

66 Տե՛ս SOCG, vol. 292, f. 507:

67 Տե՛ս SOCG, vol. 222, f. 42+45:

արարողութիւններին, որպէսզի ձեռք բերելով հայոց վստահութիւնը, շարունակի նրանց առաջնորդել կաթողիկէ հաւատքին: Նոյն նպատակով հրաման է խնդրում նաեւ անապակ գինով պատարագելու, այսինքն առանց ջրախառնութեան»[68]:

Այս հարցի վերաբերեալ Գալանոսը եւս յայտնում է իր անձնական կարծիքը Հաւատասփիւռի ժողովին. շատ հաւանաբար նրա ակնարկի վրայ: 1660 թ. մայիսի 9-ին Գալանոս գրում է. «Առաջին կէտի նկատմամբ, եթէ Հաւատաքննութեան ժողովը չմիջամտի եւ չորոշի այս հարցի մասին, որ ունի իր բարդութիւնները, կարելի է պատասխանել թէ Ս. Ժողովը ամբողջապէս տեղեակ չլինելով հարցերին, թոյլ է տալիս Տէր Յովհաննէսին որ ենթարկուի իր խոստովանահօր խորհրդին: Երկրորդի նկատմամբ. զանազան ծէսերի համաձայն, կարելի է սկզբից, ծածուկ կերպով, բաժակի մէջ ջուր դնել, ինչպէս բոլորին ասում էի [Պոլսում]»[69]:

Հաւատասփիւռի ժողովը հարցը քննում է 1660 թ. փետրուարի 28-ի նիստում, որի արձանագրութիւնները տեղեկացնում են. «Տէր Յովհաննէս, որի մասին շատ գովասանքներ կան Հալէպի ֆրանսիական դեսպանի կողմից, ասում է կարող է հայ հերձուածողներից աւելի օգուտ ունենալ, եթէ իրեն չարգելուի նրանց հետ հաղորդակցուելը: Հիմա հրաման է խնդրում մտնելու նրանց եկեղեցիները ու հակառակ որ տարին երկու-երեք անգամ երգւում է ս. Լեւոնի եւ Քաղկեդոնի հակառակ, սակայն Տէր Յովհաննէսը խոստանում է այդ պահերին սրտում մտածել ու աղօթել հակառակ կերպով եւ երբ հարցնեն իրեն թէ պատրա՞ստ է բացայայտ կերպով հակառակը խօսել եղածին, հրաման է խնդրում պակը խօսել եղածին, հրաման է խնդրում պատարագելու առանց ջրի»: Ժողովի մասնակիցների որոշումը լինում է «Ո՛չ երկուսի էլ նկատմամբ»[70]:

Զ. Նոր դժուարութիւններ Հալէպում

Հաւատասփիւռի ժողովի 1662 թ. յուլիսի 17-ի նիստի արձանագրութեան[71] վկայութեամբ զեկուցուել են հարցեր, որոնք վերաբերում են Յովհաննէս Աբդալին: Դրանց ամփոփումը հետեւեալն է. «Հալէպի լատին կրօնաւորներ զոյգ մեծաւորները, այն է վեղարաւորների Սեղբեստրոս ս. Անանիայի եւ կարմեղեանների մեծաւոր Յովհաննէս-Պետրոս մօրն Աստուծոյ, գրում են Հաւատասփիւռի ժողովին թէ Հալէպում մի շարք հերետիկոս հայ քահանաներ չհանդուրժելով կաթողիկէ հաւատքի ծաւալումը եւ կատարուած դարձերը, տեղի փաշային են մատնում Տէր Յովհաննէս Աբդալին, իբր ֆրանկ դարձած եւ ուրիշներին եւս լատինացնող, որոնցից 200 հոգու անցկացրել է Եւրոպա: Յովհաննէս Աբդալը,– համաձայն վերոյիշեալ վկայութեան,– դրւում է բանտ, յանձնւում է հաւատքն ուրացած մի հայի, որ երեք օր շարունակ չարչարում է իրեն: Հայերը, քաջալերուած սրանից, լուրեր են տարածում թէ Տէր Յովհաննէսը պիտի կախուի կարմեղեանների եկեղեցու ճակատին, բոլոր դարձի եկածները պէտք է բանադրուեն ու ունեզրկուեն ու լատին միսիոներների մուտքը քրիստոնեաների տները պէտք է արգելել: Հայերին ձայնակցում են նաեւ հերետիկոս ասորիները:

Կաթողիկէները մատնւում են դժուարութեան եւ թէեւ հիւպատոսը աշխատում է այս դժբախտութիւնների առաջն առնել, հակառակ որ նոյնիսկ պարտքով փող է վերցնում եւ գործածում է այս նպատակով, սակայն հայերը փաշային 600 ոսկի էին տուել եւ խոստացել էին աւելին տալ, եթէ

68 Տե՛ս SOCG, vol. 222, f. 4:

69 Տե՛ս SOCG, vol. 222, f. 43:

70 Տե՛ս Acta, vol. 29, f. 69, n. 41:

71 Տե՛ս Acta, vol. 31, f. 161, n. 22:

© National Library of Armenia

Երուսաղէմից հասնէր իրենց եպիսկոպոսը[72], որ խորամանկ էր եւ հարուստ ու ինքն էր այս հալածանքի կազմակերպիչը:

Նոյն օրերին Հաւատասփիւռի ժողովը Հալէպի Ֆրանսիական հիւպատոսին է ուղարկում 1200 սկուդ, Պարսկաստանի կարմեղեաններին փոխանցելու համար[73]: Հիւպատոսը, որ ամենայն հաւանականութեամբ համարելով, որ ճիշտ է կռահում կարդինալների միտքը, մտածում է այդ գումարով ծայրայեղ մի վտանգի առաջն առնել, վախ կար որ մեկ վայրկեանում կարող էր յօդս ցնդել տարիների աշխատանքը: Ձեռք ընկած գումարով նա յաջողում է ոչ միայն բանտից ազատել Տէր Յովհաննէսին, այլեւ փաշայի հրահանգով ստանում է «վարդապետ» տիտղոսը: Տէր Յովհաննէսը վերադառնում է նախկին պաշտօնին, համարձակօրէն քարոզելով հայերին կաթողիկէ եկեղեցում...: Տեսնելով այս բոլորը հերետիկոս հայերը ամօթահար եղան, կաթողիկէները համարձակութիւն ձեռք բերեցին, իսկ նրանք որ վախից թաքնուել էին՝ համարձակօրէն դուրս ելան:

Հիւպատոսը վախենալով, որ փաշայի փոփոխութիւնից հայերը կարող են նոր խռովութիւններ յարուցել, Պոլիս Մեծ Դրան եւ Պատրիարքի մօտ մարդ ուղարկեց, Տէր Յովհաննէսի հաստատման համար եւ երկու հայ քահանաներից մեկին եպիսկոպոս ձեռնադրելու համար, որ հաւատքի դաւանութիւն էր տուել:

Հաւատասփիւռի ժողովի այս նիստի արձանագրութիւնները աւարտւում են քարտուղարի խորհրդածութեամբ, թէ Տէր Յովհաննէս Աբդալը վախկոտ մեկը լինելով, նախկինում հիւպատոս Picquet-ն իր թեւի տակ վերցնելով քաջալերել էր, որից յետոյ նա արիութեամբ էր գործել: Այս բոլորը հաստատում է նաեւ Հելիոպոլսի եպիսկոպոս mons. Pallu-ն, որ Հալէպից Չինաստան ուղեւորուելիս տեսել եւ գրել էր ս. Ժողովին»[74]:

Այս բոլոր դէպքերը պէտք է պատահած լինեն 1660-1661 թուականներին, երբ Պիքէն Հալէպի հիւպատոսն էր եւ ձեռնադրուելով Հելիոպոլսի եպիսկոպոս, իր փոխարէն հիւպատոս է նշանակւում Baron-ը, որ Տէր Յովհաննէսի համակիրներից չէր: 1662 թ. օգոստոսի 7-ի Հաւատասփիւռի ժողովի նիստի արձանագրութիւնները շարունակում են վերեւում ակնարկուած պատմութեան նիւթը. փորձենք մէջբերել ամբողջութեամբ.

«Հելիոպոլսի եպիսկոպոս Francesco [Picquet]-ը (1662?) ապրիլի 22-ի իր նամակով, որ ստորագրել են Հալէպի Ֆրանսիական հիւպատոսն ու այլ միսիոներներ, վկայում են, որ ճիշտ են Յովհաննէս Աբդալի մասին գրուածները, թէ ինչեր քաշեց հերձուածողներից եւ որ հիմա համարձակօրէն քարոզում է հաւատքը: Հայերը, նրան հակառակ, Պոլսի պատրիարքից նամակ են բերել, սպառնալիքներով նամակ է եկել նաեւ Երուսաղէմի պատրիարքից, պապին հակառակ նզովելով կաթողիկէ հայերը:

Համաձայն Հելիոպոլսի եպիսկոպոսին, քանի որ Տէր Յովհաննէսը վախկոտ էր, նրա փոխարէն պէտք էր նշանակել մի եպիսկոպոսի, ինչը կարելի էր ձեռք բերել դրամով Պոլսի արքունիքի եւ փաշայի միջոցով. սա է միակ ճանապարհը կաթողիկէութիւնը տարածելու:

Ֆրանսիական հիւպատոսը (1660?) մայիսի 7-ին գրում է, որ հալածանքի ժամանակ բացայայտուեց Տէր Յովհաննէս Աբդալի երկչոտ նկարագիրը, անկարող պաշտպանելու կաթողիկէ հաւատքը, ուստի Հալէպի համար օգտակար տարը չլինելով, յոյսեր ներշնչելով պէտք է Հռոմ կանչել, Հալէպից էլ չափազանցուած գովասական նամակներ ձեռքը տալով, որպէսզի Հռոմում մնայ եւ կամ, ուղարկուի այնպիսի մի ապահով տեղ, որ չվնասի: Սակայն այս բոլորը պիտի անել մեծ գաղտնապահութեամբ:

Ֆրանսիական հիւպատոսը թուարկում է հետեւեալ պատճառները.

ա. Տէր Յովհաննէսը նկարագրով ոչ միայն երկչոտ է, ճղճիմ եւ անդէմ, այլ նաեւ սիրում է իր հանգիստը, անհոգութիւն դրսեւորելով հոգիների բարիքին.

բ. Սէր է ցուցաբերում հերետիկոսների նկատմամբ, առանց նրանց նզովելու.

գ. Ամէն անգամ արդարացնում է հերետիկոսներին, հէնց խօսք է գնում նրանց սխալների մասին.

դ. Բանտարկուած օրերին իրեն ցուցաբերուեց ամեն տեսակ օգնութիւն, իսկ ինքը վախից դրդուած նոյնիսկ սպառնաց թէ պատրաստ է համագործակցելու թուրքերի հետ ընդդէմ միսիոներների:

Ի հաստատութիւն ասուածի, ֆրանսիական հիւպատոսը ուղարկել է Յովհաննէս Աբդալի ապրիլին գրած զոյգ նամակները, մեկը հիւպատոսին, միւսը՝ միսիոներներին, ուր նա արդարացնում է իրեն, մեղադրելով դիմացիներին, միաժամանակ թուրքերի հետ համագործակցելու սպառնալիքով:

Հաւատասփիւռի ժողովի այս արձանագրութեան աւարտին, Հաւատասփիւռի քարտուղարը խօսքն ուղղելով ժողովական կարդինալներին, մեզ է հաղորդում ժամանակագրական տեղեկութիւններ. «Տէր Յովհաննէս Աբդալը հասել է Հռոմ եւ խնդրում է դրամական նպաստ ապրելու համար: Երբ հարցրի Հալէպում պատահած դէպքերի մասին, արդարօրէն պարզաբանեց թէ նոր հիւպատոսը չի ցանկանում որ որեւէ մեկը իրեն հակառակուի ու երբ ես համարձակուեցի, անմիջապէս մտածեց ինձ քաղաքից հեռացնելու մասին եւ թէ այս դէպքերը պիտի չպատահէին, եթէ մնար Պիքէն, որ խոհեմ էր եւ վարմունք ունէր: Նոր հիւպատոսի մասին գանգատներ կան նաեւ Հալէպի միսիոներներից: Իրաւ է, որ նոր հիւպատոսի առաջարկը Տէր Յովհաննէսին բռնի կերպով Հռոմում պահելու՝ մարդավայել չէ, ոչ էլ պատուաբեր Հաւատասփիւռի համար»[75]:

Պատմական ճշգրտութեան համարյիշենք, որ Տէր Յովհաննէսը Հալէպում եղած ժամանակ հաւանաբար յարաբերութիւններ էր հաստատել քաղաքի Դաւիթ եպիսկոպոս Կարակառեցու հետ, որ 1661 թ. մայիսի 14-ին զղջման մի գիր ունի գրած եւ ուղղուած Աղեքսանդր Է. պապին, ու նամակի մէջ յիշում է իրեն այս խօսքերով. «... կամելով այսօր ուղղել զամենայն անկարգութիւն գամ առ քեզ սրբագոյն փափ, առ ի հերքել զամենայն հերձուածողութիւնս եւ զկարծիս հակառակ սուրբ Աթոռոյն Հռոմայ. եւ

72 Եղիազար Այնթապցի՞ն:

73 Հռոմի կարմեղեանների գործակալը մի յուշագիր է յանձնում ՀՍ-ի ժողովին հետեւեալ բովանդակութեամբ. «անցեալ տարի կարմեղեանների ընդհանրական գործակալը Հալէպի կարմղեան փոխմեծաւոր P. Fr. Bruno si S. Juan-ինն ուղարկեց 1700 սկուտ, որպէսզի հասցնի Պարսկաստանի եւ Հնդկաստանի առաքելութիւններին: Սակայն Հալէպի ֆրանսիական հիւպատոս Baron-ը, յարմար տեսաւ որ այս գումարից 1200-ը ծախսուի Հալէպում, որովհետեւ հայ հերետիկոսները հալածանքներ էին հարուցել կաթողիկէների դէմ եւ ինքն այդ գումարը գործածել է, որպէսզի տարիների աշխատանքը իզուր չկորչի: Այսպիսով, խնդրում ենք որ այդ գումարը ՀՍ-ի ժողովի կողմից վերադարձուի, որպէսզի յատկացնենք մեր առաքելութիւններին» (Տե՛ս SOCG, vol. 225, f. 68:)

74 Այս ընդարձակ գրութիւնը տե՛ս SOCG, vol. 225, f. 69: Նոյնի համառօտագրութիւնը ՀՍ.-ի նիստի համար տե՛ս Acta, vol. 31, f. 161, n. 22: Ֆրանսուա Պալլուն (1625-1684), 1658 թ. յուլիսից կոչուած Հելիոպոլսի եպիսկոպոս եւ առաքելական վիքար, Չինաստան ուղեւորուելիս եւ վերադառնալիս երկու անգամ եղաւ Հալէպում (տե՛ս **Hussein I. El-Mudarris & Olivier Salmon,** *Le Consulat de France à Alep au XVIIe siècle: Journal de Louis Gédoyn, Vie de François Picquet, Mémoires de Laurent d'Arvieux.* 2009, pp. 147, f. 40):

75 Տե՛ս Acta, vol. 31, f. 204, n. 23:

© National Library of Armenia

զի որպէս աստ արարի զհերքումն ի տեսակի, ի ձեռս առաքելոցն քոց, պատրի Պռունի գառմէլիդան ըզգալցին եւ Տէր Յովհաննէս Ապտալին, որ է հայ ազգաւ եւ աշակերտ պատուելի գօլէճին, որ Բռօբականտա Ֆիտէ կոչի...»[76]:

Այս կերպով սպառւում են մեր տեղեկութիւնները Տէր Յովհաննէս Աբդալի Արեւելքում տասնամեայ առաքելութեան մասին եւ սկսւում է վերջին շրջանը:

Է. Տէր Յովհաննէս Աբդալը Հռոմում

1662 թ. Տէր Յովհաննէսը Հռոմում էր առանց որեւէ պատասխանատւութեան: Կղեմէս Գալանոսը միշտ բարձր համարում ունենալով իր աշակերտի վրայ ու Տէր Յովհաննէսի Հալէպում եղած ժամանակ, երբ հարց է առաջանում լեհահայոց Նիկոլ եպիսկոպոս Թորոսովիչի փոխարինութեան մասին, 1660 թ. սեպտեմբեր 6-ի գրած մի յուշագրում Հաւատասփիւռի ժողովին առաջարկում է Տէր Յովհաննէս Աբդալի թեկնածութիւնը, որ հասուն է, տեղեակ է հայերէն ու լատիներէն լեզուներին, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութեան համար, առաջարկում է ձեռնադրել չորս կաթողիկոսներից Սսի կաթողիկոսի կողմից, մանաւանդ որ անցեալում սա առաջարկել էր Տէր Յովհաննէսին, բայց նա վերջինիս կաթողիկէ չհամարելով՝ հրաժարուել էր նրանից ընդունել ձեռնադրութիւնը, առանց պապական թոյլտւութեան[77]:

Կղեմէս Գալանոսը Լեհաստան տեղափոխուելուց յետոյ էլ հետամուտ էր, որ Տէր Յովհաննէսը անցնի իր մօտ իբր օգտակար անձ, տէր Բարսեղ Էրզրումցու եւ Տէր Զաքարի Աղամի հետ: Երբ Հաւատասփիւռի ժողովի 1665 թ. յուլիսի 13-ի նիստին Տէր Յովհաննէսին առաջարկւում է Լեհաստանի առաքելութիւնը, բացայայտ կերպով մերժում է գործադրութիւնը, քանի որ Հռոմում ձեռնարկել էր 3.000 սկուդի մի գործունէութիւն ու չէր կարող հեռանալ քաղաքից: Եւ որովհետեւ Տէր Յովհաննէսը Հաւատասփիւռի ժողովից ստանում էր ամսական 6 սկուդ, որոշւում է դադարեցնել ամսականի վճարումը[78]:

Այնուհետեւ տարիներ շարունակ մեր տեղեկութիւնները սպառւում են Տէր Յովհաննէս Աբդալի մասին: 1669 թ. երբ Լիվոռնոյում ծագել էր ազգային խռովութիւն, Տէր Բարսեղ եւ Տէր Յովհաննէս Հոլովի ներկայութիւնից եւ գործունէութիւնից, Ֆիրենցէի դուքսը հրամայական կերպով նրանց ստիպեց հեռանալ քաղաքից: Ֆիրենցէի առաքելական նուիրակը 1669 թ. ապրիլի 23-ին գրելով Հաւատասփիւռի ժողովի կարդինալներին խնդրում է նրանց փոխարէն քաղաք գործուղել փորձառու անձանց, որոնց շարքին յիշատակում է նաեւ Տէր Յովհաննէս Աբդալի անունը, որպէս փորձուած ու բարեպաշտ անձնաւորութիւն[79]:

Հաւատասփիւռի ժողովի քարտուղարը, որ նաեւ անձնական նամակ էր ստացել նոյն նուիրակից (1669 թ. մայիսի 2-ով թուագրուած) մի յատուկ գրութեամբ Հաւատասփիւռի կարդինալների ժողովին պարզաբանում է խնդիրը, ներկայացնելով Տէր Յովհաննէսի անցեալ ամբողջ կեանքն ու պատմութիւնը, բոլոր մանրամասնութիւններով[80]: Ժողովի պատասխանը հաւանաբար եղել է մերժողական, քանի որ Տէր Յովհաննէս Աբդալին դրանից յետոյ էլ տեսնում ենք Հռոմում:

Յովհաննէս Աբդալի մասին վերջին վաւերական փաստաթուղթը որ ունենք, գրուած է 1669 թ. յուլիսի 20-ին: Դա մի

76 Տե՛ս SOCG, vol. 225, f. 50-51;

77 Տե՛ս SOCG, vol. 221, f. 1: Այս նոյն հարցը զեկուցուել է ՀՍ-ի 1660 թ. սեպտեմբերի 6-ի նիստին, սակայն ոչ մի որոշում չի կայացուել (տե՛ս Acta, vol. 29, f. 235, n. 25):

78 Տե՛ս Acta, vol. 34, f. 150, n. 24:

79 Տե՛ս SC Armeni, vol. 1, ff. 228-232; 234-235:

80 Տե՛ս SC Armeni, vol. 1, f. 243-244:

խնդրագիր է, ուր ասւում է. «Տէր Յովհաննէս Աբդալ հայ քահանան, որ մի քանի տարի ծառայել է Սիրիայի առաքելութեան մէջ, ներկայումս բազում նեղութիւնների մէջ գտնուելով, ցանկանում է հայրենիք վերադառնալ: Այս պատճառով կարդինալներից խնդրում է յանձնարարական նամակներ ուղղուած տեղի միսիոներներին, ետդարձին իրեն վերադարձնեն այնտեղ թողած ապրանքները, այսինքն մեկ սնդուկ գիրք ու գրութիւններ թողնուած Հալէպի կարմեղեանների մօտ, այլ առարկաներ վեղարաւորների մօտ եւ Սիդոնի նաւահանգստի ծովայինների մօտ էլ երեք սնդուկ գիրք»[81]:

Սրանով սպառւում են մեր տեղեկութիւնները Յովհաննէս Աբդալի, Կղեմէս Գալանոս այս աշակերտի մասին. չենք կարող նոյնիսկ յստակեցնել թէ ինչ վախճան ունեցաւ: Անհնարին չենք համարում, որ Հաւատասփիւռի ժողովը, հաշուի առնելով նրա անցեալը, յատկապէս բացասական տեղեկութիւնները, կրկին որպէս միսիոներ նրա առաջարկին ընդառաջ գնացած չլինէր եւ Տէր Յովհաննէսը անձնական միջոցներով վերադարձած լինէր հայրենիք:

3. ԲԱԼԱՍԱՆ

Բալասանը կամ Պաղտասարը, ծնուել է Բոնդայում (Bondà), հօր անունը՝ Միքայէլ, մայրը՝ Թիկլան: Աշակերտել է Պօղոս Փիրոմալլի դոմինիկեան քարոզչին, Զաքարիա Աղամի եւ Ոսկան վարդապետի հետ: 1644 թ. Աղամի եւ Ոսկան վարդապետի հետ: 1644 թ. Սպահանում էր, որտեղի կարմեղեանների մեծաւորը P. Dionigio della Coronas-pina-ն իտալերէնով յանձնարարական գրութիւն էր տուել իրեն 1644թ. յունիս 20-ով թուակիր, ուղղուած Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին, ասելով՝ «ներկայ գրութիւնս ձեզ ներկայացնողը մի հայ երիտասարդ է, Պալէսան անունով, շատ բարի եւ առաքինի... յատկապէս եռանդուն է կաթողիկէ վարդապետութեան եւ հռոմէական եկեղեցու հանդէպ, որի համար նեղութիւն է կրել եւ հալածանքի ենթարկուել հերձուածողներից»[82]:

Նոյն Սպահանից օգոստինեանների մեծաւորն էլ, P. Giosef dal Rosario, 1644 թ. յունիսի 21-ի գրութեամբ, իսպաներէնով գրել է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին: Նամակի իտալերէն թարգմանութիւնը կատարուել է քարտուղարութեան կողմից, որից տեղեկանում ենք թէ Բալասանը աշակերտել է Փիրոմալլուն ու հալածուել է կաթողիկոսի եւ հայոց գլխաւորների կողմից, յատկապէս կաթողիկէ դառնալու եւ «հայ հերձուածողներին հակառակ» կաթողիկէ հաւատքը պաշտպանելու: Հռոմ է գալիս սովորելու, եւ լաւագոյն ձեւով կաթողիկէ հաւատքը պաշտպանելու եւ այլոց կրթելու համար[83]:

Բալասանը Սպահանից պէտք է անցած լինի Ապարաներ (Նախիջեւան), ուր Պօղոս Փիրոմալլին 1644 թ. օգոստոսի 22-ին տուել է յանձնարարական գրութիւն ուղղուած Հաւատասփիւռի քարտուղարին, գրելով... «Բալասան անունով նամակաբերս աշակերտներից մեկն է, Զաքարիայի ու Ոսկանի ընկերներից, կաթողիկէ հաւատքը սովորել է թէ՛ Լեհաստանում եւ թէ՛ այստեղ Հայաստանում: Կաթողիկէ դառնալու պատճառով անգթօրէն հալածուեց թէ կաթողիկոսից եւ թէ իր ազգակիցներից: Սպահանում երկու անգամ գաւազանով խարազանուեց եւ մեկը՝ իմ եւ կաթողիկոսի ներկայութեամբ: Ցանկացաւ Հռոմ մեկնել, գիտի լատիներէն, որ կարող է արագօրէն կատարելագործել, բառերը գիտէ, բայց անծանօթ է բառերի հոլովումներին ու բայերի խոնարհումին: Մեր ճանապարհորդութեան ընթացքում չհասցրեց սովորել: Ցանձնում եմ Ձեր խնամքին,

81 Տե՛ս SC Armeni, vol. 1, f. 293:

82 Տե՛ս SOCG, vol. 21, f. 204:

83 Տե՛ս SOCG, vol. 62, f. 188+191, իտալերէն համաոստագրութիւնը տե՛ս 189+190:

© National Library of Armenia

որ որեւէ վարժարանում ուսանի. այս տարրերը ներկայ ժամանակներում կարող են մեծապէս օգտակար լինել»[84]:

Մի տարի յետոյ Բալասանը Հռոմում էր եւ ներկայացրած մի խնդրագրում անդրադառնում է իր կեանքի մանրամասնութիւններին. «Հայ Բալասանը, Մեծ Հայքի Գանձիա քաղաքից, ցանկանալով ուսանել գիտութիւններ եւ կաթողիկէ հաւատքը, թողել է տան հանգիստ կեանքը հետեւելով Փիրոմալլիին, հետը շրջելով երկրէ երկիր, մինչեւ Լեհաստան, ցանկանալով հասնել մի կէտի, ինչը անհնարին է եղել Փիրոմալլի աստանդական կեանքի պատճառով: Վերջինս յուսալով Սպահանի կարմեղեանների սովորել փափաքածը, նզովուեց Մեծ Հայաստանի կաթողիկոսի կողմից, որ իր բոլոր եկեղեցիներում յայտարարել տուեց, որ ինձանից փախչեն իբրեւ հերետիկոս եւ հռոմէական հաւատքի անձ: Կարմեղեաններն ու Փիրոմալլին տեսնելով, որ վտանգի մէջ եմ գտնուում, հալածանքի եւ կեանքը կորցնելու ենթակայ, ինձ Հռոմ ուղարկեցին: Այժմ ցանկանում եմ նուիրուել ուսման, պատրաստ ծառայելու Ձեզ եւ ս. հաւատքին»[85]:

Հաւատասփիւռի ժողովի 1645 թ. յուլիսի 8-ի նիստին ներկայացւում է Բալասանի խնդրագիրը ու իրեն սահմանւում է ամսական երեք սկուդի թոշակ, մինչեւ որ Ուրբանեան վարժարանում տեղ բացուէր իր համար, այսինքն Զաքարիա Աղամը աւարտելով ուսումը վարժարանից դուրս կը գար[86]:

1645 թ. յուլիսի 24-ի Հաւատասփիւռի ժողովի նիստին ընթերցւում են Սպահանի օգոստինեան մեծաւորի յանձնարարական գրութիւնները Բալասանի մասին, սակայն ժողովի մասնակից կարդինալները հաստատակամ են մնում իրենց նախկին որոշման վրայ եւ կրկին հաստատում են, որ ամսական երեք սկուդ թոշակը շարունակուի վճարուել չորս ամսուայ համար[87]: Հաւատասփիւռի ժողովի 1645 թ. սեպտեմբերի 30-ի մի այլ մասնական նիստում կրկին անդրադարձ է լինում այս նիւթին[88]: Ի վերջոյ, 1645 թ. հոկտեմբերի 2-ին տրւում է հրամանը, որ Բալասանը կարող է մտնել Ուրբանեան վարժարան Զաքարի Աղամի փոխարէն[89]:

1646 թ. օգոստոսի 24-ին, Հաւատասփիւռի ժողովի նիստը որոշում է կայացնում, որ Բալասանը բնակուի վարժարանից դուրս, որպէսզի կղերականի տարազով կարողանայ յաճախել Կղեմէս Գալանոսին, հայերէն լեզուով կատարելու աստուածաբանական ուսումնառութիւնը: Այդ պատճառով ուսանողական շրջանի համար սահմանւում է ամսական վեց սկուդ, տարեկան յաւելեալ եւս 12 սկուդի չափ գումար՝ զգեստի համար[90]: Բալասանը այս որոշման համար շնորհակալ լինելով հանդերձ, խնդրում է ամսական վճարի յաւելում, սակայն 1646 թ. հոկտեմբերի 23-ի նիստը նրա խնդրանքը թողնում է անպատասխան[91]:

Կղեմէս Գալանոսի մօտ հայերէն լեզուով դասեր նախ ընդունում է Զաքարիա Աղամը, որին էլ յաջորդում է Բալասանը: Աւելի ուշ, Հաւատասփիւռի ժողովի որոշմամբ ու հրամանով, 1647-ին Բալասանին են միանում նաեւ երկու ուրիշ աշակերտներ՝ Յովհաննէս Աբդալն ու Կարապետ վրդ. Երեւանցին[92]: 1647 թ. մի արձանագրութեան համաձայն, երկու քրիստոնեաներ, Եփրեմ եւ Գէորգ (հայե՞ր) անուններով, խնդրում են Հաւատասփիւռի ժողովից, որ «Աստծոյ սիրոյն Բալասան անունով հայը իրենց չնեղի եւ չնախատի»[93], իսկ 1648 թ.

84 Տե՛ս SOCG, vol. 62, f. 250:
85 Տե՛ս SOCG, vol. 409, f. 1:
86 Տե՛ս Acta, vol. 16, f. 345, n. 28:
87 Տե՛ս Acta, vol. 16, f. 375, n. 32:
88 Տե՛ս Congregazione Particolari, vol. 9, f. 75, n. 5; f. 116, n. 16:
89 Տե՛ս SOCG, vol. 409, f. 490:
90 Տե՛ս Acta, vol. 17, f. 200, n. 39:
91 Տե՛ս SOCG, vol. 412, f. 136:
92 Տե՛ս SOCG, vol. 413, f. 266; Congregazione Particolari, vol. 9, f. 142, n. 17:
93 Տե՛ս SOCG, vol. 415, f. 111:

յունուարի 12-ի Հաւատասփիւռի ժողովի նիստին որոշւում է, որ Բալասանին տրուի նոր զգեստ, մանաւանդ, որ ուսումն ամբողջացնելով, պատրաստւում էր վերադառնալ Հայաստան[94]:

Մինչ Պօղոս Փիրոմալլին 1648 թ. մարտի 18-ին Սպահանից գրում էր Հաւատասփիւռի ժողովի նախագահին եւ ի շարս այլ հարցերի, յատուկ ողջոյններ էր յղում իր երկու աշակերտներին՝ Բալասանին եւ Զաքարիա Աղամին, յանձնարարելով չթողնել նրանց հեռանալու[95], Կղեմէս Գալանոսը, Բալասանի օրուայ ուսուցիչը գոհացուցիչ պատասխան չի տալիս նրա մասին:

1648 թ. յունիսին Գալանոսը գրում է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին. «կարդինալ Capponi-ն երեք ամիս է հարցնում է, թէ հայ աշակերտները առաջադիմո՞ւմ են ուսման մէջ: Ես,- այո՛,- եմ պատասխանում: Ինքն ասում է, թէ մենք չենք կարող հասկանալ նրանց առաջադիմութիւնն ու զարգացումը, որովհետեւ չգիտենք հայերէն լեզուն: Այժմ, խղճիս տենք հայերէն լեզուն: Հաղորդեցէք կարդինալ Capponi-ին: Արդէն չորս տարի է, որ սովորեցնում եմ Բալասան հային. կարդացի աստուածաբանութեան այն մասերը, որոնք հարկաւոր են իրենց համար: Երբ տեսայ, որ չեն իւրացնում, սպառնացի թէ պիտի հաղորդեմ Հաւատասփիւռի ժողովին, որպէսզի դադարեցնեն ամսական վճարումը: Բալասանը վախենալով սկսեց աշխատել: Բայց ոչ Կարապետ վարդապետի ու Յովհաննէս Աբդալի նման: Տեսնելով որ չի առաջադիմում, ս. Երրորդութեան ճառը դասաւանդելիս, իրեն դասարանից դուրս հանեցի, որպէսզի զգաստանայ: Բալասանը դիմեց Ձեզ, ասելով թէ ուզում է վեց ամիս լատիներէն եւ իտալերէն սովորել, ինչ որ նշանակում է 42 սկուդի ծախս ս. Ժողովի վրայ եւ ծովը նետել այդ գումարը: Այսպիսով այդ գումարը կարելի է տալ մի ուրիշ հայի, որպէսզի օգտուէր. այլապէս շատ հայեր սրա ընթացքը տեսնելով գայթակղւում են: Իմացէք, որ Բալասանը չի ուզում ո՛չ հայ, եւ ո՛չ լատին քահանայ դառնալ, եւ այս նպատակով էլ միշտ փախուստ տուեց սովորական (հաւատարմութեան) երդումից եւ ծրագրեր ունի կայսրին ծառայելու պատերազմների մէջ, միշտ մետաքսէ [հագուստ] է հագնում. իսկ ես իրեն տեսել եմ իր երկրի մէջ՝ պատառոտուն կօշիկներով եւ զգեստներով, սակայն լսել եմ, որ իր նախնիները բարի ընտանիք են եղել: Սկսեց աւելի լաւ սովորել տարրալուծութիւնը («alchimia»), պղինձն ու ոսկին իրեն աւելի էին հետաքրքրում: Իմ կարծիքով ստացած ուսումը իրեն բաւարար է, [պէտք է] տալ ճանապարհածախսը եւ ուղարկել իր երկիրը»[96]:

1648 թ. յունիսի 15-ի եւ 17-ի մասնական նիստերրով Հաւատասփիւռի ժողովը որոշում է Բալասանին յատկացնել 80 սկուդ ճանապարհածախս, որպէսզի Զաքարիա Աղամի հետ ուղեւորուի Լեհաստան, այնտեղից ճանապարհը շարունակելու համար դէպի Հայաստան: Որոշւում է գրել նաեւ յանձնարարական նամակներ Վենետիկի, Գերմանիայի, Լեհաստանի առաքելական նուիրակներին, ինչպէս նաեւ Փոքր Ասիայի կաթողիկոսին, որպէսզի օգնեն ու աջակցեն Բալասանին[97]:

Բալասանը ճանապարհ ընկնելով Հռոմից, Անգոնա հասնելով 1648 թ. յուլիսի 1-ին, գրում է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին, ներողութիւն խնդրելով որ չէր կարողացել վերջին հրաժեշտը տալ: Յայտնում է որ նաւով պիտի ուղեւորուի Վենետիկ, շարունակելու համար ճանապարհը դէպի Վիեննա[98]: 1648 թ. օգոստոսի 1-ին,

94 Տե՛ս Congregazione Particolari, vol. 9, f. 204, n. 5:
95 Տե՛ս SOCG, vol. 292, f. 352+359:
96 Տե՛ս SOCG, vol. 416, f. 434:
97 Տե՛ս Congregazione Particolari, vol. 9, f. 235, n. 13; f. 237, n. 5; f. 240, n. 4. ինչպէս նաեւ Lettere volgari, vol. 26, f. 73:
98 Տե՛ս SOCG, vol. 53, f. 265:

© National Library of Armenia

Վենետիկի առաքելական նուիրակը՝ «Պիզայի արքեպիսկոպոսը», տեղեկացնում է Հաւատասփիւռի նախագահ կարդինալ Capponi-ին, թէ Բալասանի ձեռօք ստացել է իրեն ուղղուած նամակը եւ թէ կարելին պիտի անի օգնելու համար Բալասանին, որ նա ապահով հասնի իր հայրենիքը[99]:

Որեւէ տեղեկութիւն առայժմ չունենք, թէ ինչպէս դասաւորուեց Բալասանի ճանապարհորդութեան հետագայ ընթացքը, սակայն 1653 թ. նրան կրկին անգամ գտնում ենք Հռոմում, հաւանաբար Լեհաստանից վերադարձած, ու ներկայանում է որպէս նախկին սան, խնդրելով դրամական օգնութիւն: 1653 թ. յունուար 13-ի Հաւատասփիւռի ժողովի նիստին առաջարկն ընդունւում է[100]: Ապա դարձեալ խնդրագիր է ներկայացրել, առաջարկելով Լեհաստան գնալու ծրագիր, ուստի խնդրում է Գալանոսի Պատմութեան եռահատորեակը եւ Քերականութիւնից վեց օրինակ: Խնդրագիրը գրուած է Գալանոսի գրչով[101]: Այս խնդրագրի տակ քարտուղարը մակագրել է՝ «վերոյիշեալ գրքերը թող տան»:

Բալասանի Հռոմում նորից յայտնուելու նպատակի վրայ գուցէ որոշ լոյս է սփռում նրա այն խնդրագիրը, որ ներկայացրել է Հաւատասփիւռի ժողովին 1653 թ., առանց նշելու օրն ու ամիսը: Խնդրագրում ասւում է. «Հայ կաթողիկէ Բալասանը, որ մի քանի տարի աշակերտել է ս. Ժողովին եւ Հռոմում Գալանոսից հայերէնով սովորել է սրբազան գիտութիւնը, Լեհաստանում թաթարների ձեռքից ազատուելու գործում օգնած լինելով լեհերին, իրեն իբր վարձատրութիւն Լեհաստանում սահմանուել է մի քանի հազար սկուդ գումար: Բալասանը մտածում է այդ գումարի եկամուտով կամենեցում հաստատել եպիսկոպոսական աթոռ հայոց համար, որոնք ստուարաթիւ են, տեղի հերձուածող եպիսկոպոսի փոխարէն, որ մահացել էր: Նոր եպիսկոպոսը կարող է օգտակար լինել Նիկոլ Թորոսովիչին, որ հաւատոյ դանութիւն էր տուել: Հիմա խնդրում է ձեր հաւանութիւնը գործը սկսելու համար»[102]: Այս արձանագրութեան պատասխան կամ որեւէ արձագանք դիւանում չհանդիպեցինք եւ չենք էլ տարակուսում նոյնիսկ, որ Բալասանը ներկայ գրութեամբ ինքնիրեն էր առաջարկում այդ պատասխանատուութեան համար:

Ապա Բալասանը Հռոմից մեկնում է Լեհաստան: Հաւատասփիւռի ժողովի կողմից 1653 թ. մարտի 12-ին գրւում է մի յանձնարարական նամակ Լեհաստանի առաքելական նուիրակին ի նպաստ Բալասանի[103]:

Երբ Հռոմում մտածւում էր լեհահայոց Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչին մի օգնական եպիսկոպոս տրամադրելու մասին եւ հարցրել էին նաեւ Կղեմէս Գալանոսի կարծիքը, նա գրաւոր ներկայացրել էր իր տեսակէտը, որ յաջորդաբար զեկուցուել էր Հաւատասփիւռի ժողովի 1660 թ. սեպտեմբերի 6-ի նիստի ժամանակ[104]: Որպէս յարմար թեկնածու Գալանոսի առաջարկած անձը Տէր Յովհաննէս Աբդալն էր, որն այդ պահին գտնւում էր Հալէպում եւ կամ Տէր Զաքարիա Աղամը, որ Հռոմում պաշտօնավարում էր որպէս թարգման: Գալանոսը յարմար էր գտնում, որ Տէր Զաքարիան Լեհաստան տեղափոխուի, որտեղից իրեն հրաւիրել էր Բալասանը, առաջարկելով իրեն ընկերանալ Գանձասարի կաթողիկոսից եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ստանալու համար: Գալանոսը այս գրութեամբ դեռ այլ մանրամասնութիւններ էլ էր յայտնում, գրելով. «Տէր Զաքարիա Աղամն ինձ վստահեցնում է, որ 1648 թ. երբ Հռոմից մեկնեց, ս. ժողովի աշակերտը, հայ ազ-

99 Տե՛ս SOCG, vol. 55, f. 57:
100 Տե՛ս Acta, vol. 22, f. 6, n. 15:
101 Տե՛ս SOCG, vol. 292, f. 422:
102 Տե՛ս SOCG, vol. 292, f. 423:
103 Տե՛ս Lettere volgari, vol. 29, f. 98:
104 Տե՛ս Acta, vol. 29, f. 235, n. 25:

նուական Բալասանը, նոյն ս. ժողովի միջոցով նորին սրբութիւնից հրաման էր ստացել հայ ծէսով եպիսկոպոս ձեռնադրուելու որեւէ կաթողիկոսից: Սա չիրականացաւ, որովհետեւ յիշեալ Բալասանը չուզեց թողնել ազնուական կարգը»: Գալանոսն առաջարկում է, որ քննուի անցեալից մնացած դիւանը ու նման հրաման կրկնուի Տէր Յովհաննէս Աբդալի եւ կամ Տէր Զաքարիա Աղամի համար[105]:

1660 թուականի այս գրութիւնից յետոյ մենք այլեւս չունենք որեւէ տեղեկութիւն կամ ծանօթութիւն Բալասանի վերաբերեալ, մանաւանդ որ մեր ինքնակամ որոշմամբ երբեք չենք յանդգնել ձեռնարկելու մանրամասնութիւններով լի փաստաթղթային ժառանգութեան ուսումնասիրմանը:

4-5. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԵՒ ՏԷՐ ԱԶԱՐԻԱ ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Խաչատուրի մասին անցողակի խօսեցինք, երբ անդրադարձանք Գալանոսի Հռոմի մէջ 1600-1662 թթ. բացած Հայոց վարժարանին, ուր Խաչատուրը յայտնուեց իբր դռնապան եւ սեղանադիր:

Խաչատուրը ծնուել էր Պոլսում, որտեղից անցել էր Հռոմ՝ 1659 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ոմն Պողոս Վարդապետի հետ: Հաւատասփիւռի ժողովի կարդինալները արձակուրդի մէջ լինելով, Խաչատուրը չէր կարողացել նիւթական որեւէ նպաստ ստանալ եւ ուղղուել էր Վենետիկ, օգնութեան համար դիմելու տեղի ազգակիցներին:

Հաւատասփիւռի ժողովի քարտուղար Alberici-ն, 1659 թ. նոյեմբերի 8-ին նամակով հետաքրքրւում է նրանով, անձամբ գրելով Խաչատուրին, իսկ իր մասին տեղեկութիւններ ստանալու համար դիմում է Վենետիկի առաքելական նուիրակին: Վենետիկի առաքելական նուիրակը, նախ 1659 թ. նոյեմբերի 15-ին պատասխանում է, թէ իր մասին տեղեկութիւններ չունեն նոյնիսկ քաղաքի իր ազգակիցները[106], իսկ նոյեմբերի 22-ին տեղեկացնում է, որ գտել է Խաչատուրին եւ հաղորդել է Հաւատասփիւռի ժողովի կամքը, որ է՝ վերադառնալ Հռոմ. բայց երբ Հռոմից ստացել է նոյեմբերի 15-ի թուակիր նամակը, ուր պատուիրւում էր թողնել որ Խաչատուրը գնար իր նախընտրած քաղաքը, նուիրակը ջանացել է բացատրել Խաչատուրին Հաւատասփիւռի ժողովի կամքը: Սակայն յայտնում է իր տարակուսանքը Խաչատուրի հասկացած լինելու մասին. «Որովհետեւ,- գրում է,- չեմ կարծում որ մեծ իմաստութիւն ունի»[107]:

Նուիրակի 1660 թ. յունուարի 3-ի նամակից տեղեկանում ենք, որ գաղտնի կերպով նշանակել է մի անձի, որ հետեւի Խաչատուրի բոլոր քայլերին եւ այն համոզման է եկել, որ Խաչատուրը համոզուած կաթողիկէ հոգի ունի, հաստատուն է իր հաւատքի վրայ, չնայած ազգայինների կողմից նախատուելուն ու ծաղրի ենթարկուելուն: Նուիրակը Խաչատուրին տուել է չորս ու կէս ոսկի սկուդ, որպէսզի կարողանայ ապրել ու ճանապարհորդել[108]: Ի վերջոյ, Խաչատուրը, վերցնելով նուիրակի տուած 1659 թ. դեկտեմբերի 15-ով թուակիր յանձնարարական գրութիւնը[109] ուղղւում է դէպի Հռոմ:

Հաւատասփիւռի ժողովի 1660 թ. յունուարի 13-ի նիստին զեկուցւում են այս բոլոր անցուդարձը, երբ Խաչատուրը դեռ Վենետիկ-Հռոմ ճանապարհին էր: Որոշւում է գրել Վենետիկի առաքելական նուիրակին, որ ջանքեր գործադրի օգնելու Խաչատուրին վերադառնալու իր հայրենիքը[110]:

105 Տե՛ս SOCG, vol. 221, f. 1:
106 Տե՛ս SOCG, vol. 223, f. 36:
107 Տե՛ս SOCG, vol. 223, f. 34:
108 Տե՛ս SOCG, vol. 223, f. 38:
109 Տե՛ս SOCG, vol. 223, f. 50:
110 Տե՛ս Acta, vol. 29, f. 3, n. 2:

© National Library of Armenia

Մինչ այս, Խաչատուրը հասնում է Հռոմ եւ 1660 թ. փետրուարի 23-ի Հաւատասփիւռի ժողովի նիստին զեկուցւում է թէ Խաչատուրը զգուշանում է Պոլիս վերադառնալուց, այնտեղ կեանքի վտանգ տեսնելով, որովհետեւ արդէն տարածուել էր Խաչատուրի որդեգրած նոր հաւատքի ու համոզմունքների մասին լուրերը: Խաչատուրը խնդրագիր է ներկայացնում բնակուելու Հայոց հիւրանոցում ս. Մարիամ Եգիպտացու եկեղեցուն կից, օրական կէս ջուլիով, քանի որ մտադիր էր իրեն ճգնութեան նուիրելու, գոհանալով հացով, ջրով ու բուսական սննդով, ցանկանալով կեանքն աւարտել Հռոմում, եկեղեցուն ծառայելով[111]*:*

Հռոմում ծանր հիւանդանում է Խաչատուրին Պոլսից, դեռեւս 1659 թ. հոկտեմբերից ուղեկցող Պողոս վարդապետը: Գալանոսն ու Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցին միջամտում են Հաւատասփիւռի ժողովի առջեւ, որ Խաչատուրին մի անկողին տրամադրուի, քանի որ սիրայոժար ուզում էր մնալ հիւանդի մօտ խնամելու նպատակով[112]*: Պողոս վարդապետը շուտով վախճանւում է, եւ, ինչպէս վերեւում տեսանք, 1660 թ. օգոստոսի 1-ին Գալանոսը Խաչատուր «ճգնաւորին» վերցնում է իր վարժարանը որպէս դռնապան:*

Փաստաթղթերից ակնյայտ է դառնում, որ Գալանոսը ընդունել էր Խաչատուրին իր չափազանց բարիութեան համար, մանաւանդ որ սնւում էր բացառապէս բոյսերով ու ջրով: Սակայն Հաւատասփիւռի ժողովի արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ Գալանոսը յաջորդաբար պահանջում է Հաւատասփիւռի ժողովից իրեն վճարել նաեւ Խաչատուրի համար, հակառակ դէպքում սպառնալով վտարել վարժարանից[113]*:*

Խաչատուրը միայն վեց-եօթ ամիս է մնում վարժարանում, ու 1660 թ. փետրուարին փոխադրւում է ս. Մարիամ Եգիպտացի՝ նուիրուելու համար ճգնելուն:

Գալանոսը 1661 թ. հոկտեմբերի ամսին գրած մի նամակում Հաւատասփիւռի ժողովի քարտուղարից խնդրում է, որ բարեհաճի յանձնարարական գրութիւն տալ Խաչատուրին[114]*: Հաւատասփիւռի ժողովի 1661 թ. դեկտեմբերի 5-ի նիստում զեկուցւում է, որ Խաչատուրը հիւանդութեան պատճառով ցանկանում է տեղափոխուել Լեհաստան եւ այդ պատճառով կարիք ունի բոլոր քրիստոնեաներին ուղղուած յանձնարարական նամակների, որպէսզի կարողանայ ապրել ողորմութիւններով*[115]*:*

Շուրջ տաս տարի լռութիւնից յետոյ Խաչատուրի մասին լսւում է Նախիջեւանի գաւառից, որի հայ կաթողիկէ թեմի առաջնորդ հայր Մատթէոս Աւանիսեանցը, Ապարաներում 1671 թ. հոկտեմբերի 12-ով թուակիր իտալերէն յանձնարարական գրութիւն է տալիս ի նպաստ Խաչատուրին: Այս գրութիւնից տեղեկանում ենք, որ Խաչատուրը որդին էր Վարդերեսի, ստացել էր չորս փոքր աստիճանները, թէ անցեալում եղել էր Հռոմում եւ կատարել էր հաւատոյ դաւանութիւն: Ս. Անտոնի զգեստով ճգնել է ս. Գրիգոր Լուսաւորչի ճգնարանում, որ 25 տարի է բնակուած է ճգնաւորներով[116]

111 Տե՛ս Acta, vol. 29, f. 70, n. 42:
112 Տե՛ս SOCG, vol. 366, f. 3:
113 Տե՛ս Acta, vol. 30, f. 212, n. 10:
114 Տե՛ս SOCG, vol. 223, f. 53:
115 Տե՛ս Acta, vol. 30, f. 212, n. 10:
116 Ակնյայտօրէն խօսքը գնում է Խորվիրապի վանական համալիրում ծաւալուած վանական գործունէութեան մասին, որ մի դրուագն էր Մովսէս Գ. Տաթեւացու օրօք Հայաստանում լայնօրէն ընթացող հայ կեանքի վերանորոգչական քայլերից (աւելի մանրամասն տե՛ս **Հ. Ներսէս Ակինեան**, *Մովսէս Գ. Տաթեւացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը. Նպաստ մը հայոց եկեղեցւոյ պատմութեան 1577-1633 շրջանի համար:* Վիեննա, 1936 (Ազգային մատենադարան, ՃԼԹ): **Կարապետ եպս. Ամատունի**, *Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս Էջմիածնի*, Վենետիկ-Ս.Ղազար, 1992 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», 36))

եւ այժմ մեկնում է Հռոմ իրեն ուղեկից ունենալով Մարտիրոսի որդի Ազարիա կիսասարկաւագին, որ նոյնպէս ցանկանում է այցելել Հռոմ՝ Հռոմէական եկեղեցու դաւանանքը կատարելու նպատակով: Այս երկու ճգնաւորները իրենց հաւատքի համար «հերձուածող հայերից» նեղութիւն քաշած լինելով հեռանում են հայրենիքից եւ խնդրում են Հաւատասփիւռի ժողովը ընդունի իրենց, իրենց համար սահմանելով առանձին ճգնարան, ուր կարող են ազատօրէն ճգնել եւ աղօթել[117]*:*

Մի ամիս յետոյ Խաչատուր եւ Ազարիա ճգնաւորները անցնում են Թաւրիզ, ուր տեղի վեղարաւորների (կապուչիններ) վանքի մեծաւորը՝ Fr. Josephus Maria Biturícus-ը 1671 թ. նոյեմբերի 22-ով թուակիր լատիներէն յանձնարարական նամակներ է տալիս նրանց. առաջինը ուղղուած Հաւատասփիւռի ժողովի կարդինալներին, երկրորդը՝ ընդհանուր բոլոր քրիստոնեաներին, յանձնարարելով որ սիրով ընդունեն Խաչատուրին, որ 1660 թ. յուլիսի 9-ին Հռոմում կաթողիկէ դաւանութիւն է տուել եւ ներկայումս Ազարիա ճգնաւորի հետ ուղղւում են դէպի Հռոմ[118]*:*

Մեր երկու ճգնաւորները Թաւրիզից անցնում են Դիարբեքիր, ուր եւս կար վեղարաւորների վանք, որի մեծաւորը՝ Fr. Josephus Maria Blessilis-ը եւս 1672 թ. մարտի 20-ով թուագրուած յանձնարարական գրութիւն է տալիս նրանց, միաժամանակ վկայելով որ Երեւանում եղած ժամանակ տեսել է թէ ինչեր են քաշել սրանք հռոմէական կաթողիկէ հաւատքը համարձակ քարոզելու համար[119]*:*

Զանազան յանձնարարական նամակներ հաւաքելուց յետոյ, Խաչատուր եւ Ազարիա ճգնաւորները վերադառնում են Թաւրիզ եւ 1672 թ. յունիսի 2-ին հայերէնով նամակ են գրում Հաւատասփիւռի ժողովին, պարզաբանելով իրենց կացութիւնը, գլխաւորապէս այն կէտը, թէ իրենք Հայաստանի մէջ համարձակ քարոզում են հռոմէական հաւատքը եւ «խրատիմք միամիտ ժողովուրդ մեր, դարձուցանեմք ի մոլորութենէ ի ճշմարտութիւն, ի յանգիտութենէ ի գիտութիւն»: Իրենց այսկերպ գործելակերպը բնականաբար ստեղծում է հակազդեցութիւն եւ երբ լուրը հասնում է Յակոբ կաթողիկոսին, գրում է իրենց, որպէսզի փոխեն իրենց քարոզութեան կերպը: «[Յ]ետ այնորիկ, որ ոչ կարացին գլուխ գնալ մեզ եւ դարձուցանել զմոլորութեան ճանապարհին իւրեանց, այնուհետեւ գիր գրեցին իւրեանց մեծ պատրիարքին մոտ՝ թէ այսպիսի բան կու լինի, որ ձեր կարդացծաց եւ ձեր օրհնաց տէր Խաչատուր քահանայն հնազանդել է. եւ էս տա տղայն այլ հնազանդել սուրբ պապին Հռոմա[յ], բազում հայս եւ վրացիս այլ դարձուցանում են: Այնուհետեւ կաթողիկոսն թուխտ էր ուղարգել վրացոյ կաթողիկոսին մօտ, եթէ այդ փռանկի պատրիարգ՝ որ տեղդ բուն են եդեալ. խափեփայ են դոքա, այլ հալածես դոցա այդ տեղացդ, իբրեւ հերետիկոս: Այլ չնորհօքն Քրիստոսի վրաց կաթողիկոսն ոչ հաւանեցաւ նոցա խօսիցն. այլ եւ որ առ... թէ ես քրիստոնեաքն ինչպէս հալածեմ»:

Խաչատուրը շարունակում է պատմել թէ այնուհետեւ հայերը որոշում են քարկոծել իրենց, որին իրենք պատրաստակամութիւն ցոյց տուեցին «քան թէ եկլեսիոս սուրբ եկեղեցուցն բաժանել զմեզ»: Վեղարաւորներից պատրի Սրապիոնը դիմում է թագաւորին, որից էլ գտնում են պաշտպանութիւն եւ այնուհետեւ համարձակ սկսում են քարոզել եւ «օր չի անցնում որ երկու կամ երեք որ չխոստովանեն մեր հայր պատրի Սրապիոնին»: Ապա տէր Խաչատու-

117 Տե՛ս SOCG, vol. 437, f. 16:
118 Տե՛ս SOCG, vol. 437, f. 20, f. 22:
119 Տե՛ս SOCG, vol. 437, f. 18:

© National Library of Armenia

ը փափագ է յայտնում իր Ազարիա ընկերոջ հետ Հռոմ անցնելու եւ թէ սպասում ենհրամանի, քանի պատրի Սրապիոնը իրենց համար գրել էր Հաւատասփիւռի ժողովին եւ պատասխանի էր սպասում: Այս նամակի տակ ստորագրում է նաեւ «Էստատէս», այսինքն Ազարիան, իր կողմից աւելացնելով՝ «այս տեղս հակառակ շատ կա[յ] մեզ, ամէն եկեղեցական անօթն կողոպտեցին մեզանէ, կու խնդրեմք բարձր վեհիցդ, որ մեզ ձեռնտու լինիս վասն եկեղեցոյ անօթի կողմանէ, մանաւանդ սկոյ»[120]:

Տարին չաւարտուած, այն է 1672 թ. նոյեմբերին Տէր Խաչատուրին եւ Ազարիային գտնում ենք Հռոմում: Հաւատասփիւռի ժողովի 1672 թ. դեկտեմբերի 19-ի նիստին քննւում են իրենց հետ բերած յանձնարարական նամակները, իրենց գրած 1672 թ. յունիսի 2-ի նամակը, ինչպէս նաեւ Հռոմում ի նպաստ իրենց Տէր Բարսեղ Բարսեղեանի վկայականը[121], որոնց իբր եզրակացութիւն, հարցը յանձնւում է կարդինալ Fachinetti-ին խնդիրը յարմար ձեւով կարգադրելու համար[122]:

Կարդինալ Fachinetti-ն դիմում է Spoleto-ի եպիսկոպոսին, որպէսզի երկու հայ ճգնաւորների համար գտնի որեւէ յարմար տեղ ճգնելու համար: 1672 թ. յունուարից յունիս ամիսները անցկացնում են Սպոլետոյում, բայց միջանկեալ, փետրուարին, Հռոմում Տէր Բարսեղը իրենց փոխարէն խնդրագիր է ներկայացնում՝ զոյգ ճգնաւորներին դրամական նպաստ սահմանելու համար[123], ինչը մերժւում է Հաւատասփիւռի ժողովի 1673 թ. փետրուարի 28-ի նիստում[124]:

1673 թ. յուլիս ամսին վերադառնում են Հռոմ եւ Հաւատասփիւռ ժողովի 1673 թ. յուլիսի 24-ի նիստին ներկայացնում են իրենց նոր խնդրագիրը, այն է՝ փոխադրուել Մալթա. ու խնդրում են յանձնարարական նամակներ ուղղուած Մալթայի մեծ դուքսին եւ հաւատաքննիչին: Փափագած նամակներն ստանալով ուղեւորւում են Մալթա[125]:

Զոյգ ճգնաւորները շուրջ տարի ու կէս մնում են Մալթայում: 1674 թ. նոյեմբերին միայն Ազարիան է վերադառնում Հռոմ, իր հետ բերելով Մալթայի հաւատաքննիչի 1674 թ. սեպտեմբերի 8-ով թուագրուած վկայականը, որ ապահովեցնում էր թէ Ազարիան օրինակելի կեանք է վարել եւ որով արժանի է, որ ս. Ժողովը նրան պահի իր հովանու տակ[126]: Ազարիան ցանկանում էր ստանալ քահանայական ձեռնադրութիւնը: Դրա համար ս. ժողովին է ներկայացնում խնդրագիր, որի ներքեւում լատիներէնով վկայում է Տէր Բարսեղ Բարսեղեանը, թէ՝ «Ես իմ հերթին վկայում եմ թէ Ազարիան ջերմեռանդ եւ լաւ կաթողիկէ է եւ որով արժանի եմ համարում, որ ընդունի քահանայական ձեռնադրութիւնը»[127]: Այս զոյգ վկայականների հիման վրայ, Հաւատասփիւռի ժողովը 1674 թ. նոյեմբերի 12-ի նիստին տալիս է ձեռնադրութեան հրամանը[128]:

Քանի որ նոյն օրերին Հռոմում էր գտնւում լեհահայոց Նիկոլ Թորոսովիչ արքեպիսկոպոսը, շատ հաւանական ենք համարում, որ Ազարիայի սարկաւագութեան եւ քահանայական ձեռնադրութիւնը կատարուած լինէր վերջինիս կողմից:

1674 թ. դեկտեմբերի 18-ի Հաւատասփիւռի ժողովի նիստում զեկուցւում է Վարդան Յունանեանի բողոքը՝ Տէր Զաքարիա Աղամի դէմ, որ Հռոմում հայոց հոգեւոր հովիւն էր եւ օրինաւոր վարքով չէր ապրում: Յունանեանը տէր Զաքարիայի

120 Տե՛ս SOCG, vol. 446, f. 179:
121 Տե՛ս SOCG, vol. 437, f. 15:
122 Տե՛ս Acta, vol. 43, f. 28, n. 12:
123 Տե՛ս SOCG, vol. 438, f. 316:
124 Տե՛ս Acta, vol. 43, f. 28, n. 12:

125 Այս մանրամասնութիւնները զեկուցուած են ՀՍ-ի 1674 թ. փետրուարի 26-ի նիստին (տե՛ս Acta, vol. 44, f. 74, n. 36):
126 Տե՛ս SOCG, vol. 450, f. 80:
127 Տե՛ս SOCG, vol. 450, f. 79:
128 Տե՛ս Acta, vol. 44, f. 303, n. 23:

փոխարէն առաջարկում է «նախկին ճգնաւոր Ազարիային, որ այժմ սարկաւագ է եւ մի քանի օրից քահանայ է ձեռնադրուելու»[129]:

Ազարիան քահանայ պիտի ձեռնադրուած լինի 1674 թ. դեկտեմբերին: 1675 թ. մարտի 4-ին Ազարիան արէն ներկայանում է որպէս քահանայ, առանց պատարագելու իրաւունքի, որովհետեւ դեռ չէր ստացել համապատասխան վկայականները: Կրկին Բարսեղ Բարսեղեանն է, որ շարադրում է խնդրագիրը[130], ուր խնդրում է նաեւ մի շարք գրքեր՝ Գալանոսի Քերականութիւնն ու Պատմութեան երեք հատորները, Ձեռնբացութիւն յերկինս, Նորագոյն ծաղիկ, Յովհաննէս Հոլովի Քերականութիւնը (երեք օրինակ), Թովմա Գեմբացի եւ Յովհաննէս Մոլինոյի Թուրքերէն-իտալերէն բառարանը[131]:

Տէր Ազարիայի խնդրանքը բաւարարւում է Հաւատասփիւռի ժողովի 1675 թ մարտի 4-ի նիստի որոշմամբ[132]:

Քանի որ Հռոմում մեր երկու ճգնաւոր քահանաները յանձնուած էին կարդինալ Tachetini-ի խնամքին, վերջինս 1675 թ յունիսի 7-ին գրում է Հաւատասփիւռի ժողովի քարտուղար Ջէրրիին «Հայ Ազարիա ճգնաւոր քահանան, որ ս. Ժողովի կողմից յանձնուել էր խնամքիս, նախկինում ինքն ու իր ընկերը տեղաւորեցի Monte Luco-յի ճգնարանը, հոգալով նրանց զգեստները եւ մանր ծախսերը: Ներկայ նամակս ինքն է որ պիտի բերի քեզ, եւ ես այլ խնդրանք չունեմ, բացի որ հայցել, որ [ս Ժողովի նախագահ] կարդինալ Ալթիերին ազդեցիկ մի նամակ գրի, ս. Ժողովի անունից ուղղուած Մալթայի եպիսկոպոսին, որպէսզի սա երկու ճգնաւորներին տրամադրի օգոստինեան կրօնաւորների թողած եկեղեցին, որ կոչւում է La Madonna della pieta: Ձեզ կարող եմ վստահեցնել, որ դուք կը նպաստէք Տիրոջ երկու բարի ծառաների եւ չեմ կարծում որ որոշ ժամանակ Հայաստանից սրանց նմանը տեսնուած լինի: Անտարակոյս սրանք չէին թողնի Monte Luco-ն եթէ սաստիկ ցուրտը չվտանգէր իրենց կեանքը: Եւ որպէսզի չը տարակուսէք նրանց օգնելու, պէտք է ասել, որ նրանք գնահատուել են Մալթայի մեծ դուքսի կողմից եւ վայելել են նրա նիւթական օգնութիւնը»[133]: 1675 թ. յունիսի 25-ի Հաւատասփիւռի նիստին զեկուցւում է այս նամակը եւ որոշւում է «թող գրուի յանձնարարական նամակը եպիսկոպոսին»[134]:

Որոշուած օրը, այն է 1675 թ. յունիսի 25-ին նամակը ուղարկւում է, որի պատասխանը Մալթայի եպիսկոպոսը գրում է 1675 թ. նոյեմբերի 13-ին, տեղեկացնելով, որ «նամակը ստացած օրը կանչեցի Chiesa della Pieta-ի տեսչին, որպէսզի ընդունի երկու հայ ճգնաւորներին: Նա Պատասխանեց, որ ս. Աթոռից կայ յատուկ որոշում՝ չընդունել ոչ ոքի, մանաւանդ մեկ սենեակ կայ մնացած, այն էլ միայն իրեն համար, որտեղից չի կարող դուրս ելնել»: Ապա եպիսկոպոսը շարունակում է, ասելով թէ Տէր Խաչատուրը եւ Տէր Ազարիան ներկայումս տեղաւորուած են Misida կոչուող եկեղե-

129 Տե՛ս Acta, vol. 44, f. 369, n. 11:
130 Տե՛ս SC Armeni, vol. 2, f. 244:
131 Տե՛ս Fondo di Vienna, vol. 32, f. 274; SOCG, vol. 452, f. 192: Յովհաննէս Անկիւրիացու (Մոլինո) իտալերէն-թուրքերէն բառարանի, որպէս թուրքերէնի առաջին բառարանի նկատմամբ հետաքրքրութիւնը մեծացել է: Դրա մասին է վկայում նաեւ բառարանի արդի գիտական հրատարակութիւնն ու ուսումնասիրութիւնը՝ տե՛ս Dictionary of Italian-Turkish Language (1641) by Giovanni Molino: Transcripted, Reversed, and Annotated. Edited by Elżbieta Święcicka, De Gruyter, 2020 (Studien zur Sprache, Geschichte und Kultur der Turkvölker Book 23): Հմմտ նաեւ **Elżbieta Święcicka,** *Interpreter Yovhannes Ankiwrac'i also called Giovanni Molino,*- Folia Orientalia. Studia in Honorem Stanislai Stachowski Dicata, Vol. XXXVI, Krakow, 2000, 329-342.
132 Տե՛ս Acta, vol. 45, f. 34, n. 2:
133 Տե՛ս SOCG, vol. 454, f. 31:
134 Տե՛ս Acta, vol. 45, f. 144-145, n. 10:

© National Library of Armenia

ցում, որ ամենայարմարն է նրանց ճգնութեան համար, քանի որ հեռու է ծովեզերքից եւ նախորդ եկեղեցու նման բազմամարդ չէ: Նոյն նամակից տեղեկանում ենք, որ քաղաքի գործակալը հաւատացեալների տուած ողորմութիւններով մեր ճգնաւորների համար չինել է յատուկ բնակարան եւ նրանք վայելում են եպիսկոպոսի բարեացկամութիւնը իրեն դիմելու դէպքում[135]:

1679-1680 թթ. վախճանւում է Մալթայի եպիսկոպոսը, որի յաջորդը դժուարանում է հրաման տալ Տէր Ազարիային պատարագելու, քանի որ չունէր քահանայական ձեռնադրութեան պահանջուած վկայականները: Տէր Ազարիան կրկին է յայտնւում Հռոմում եւ ներկայացնում իրենց իրաւիճակը: Խնդրագիրը[136] ներկայացւում է Հաւատասփիւռի 1680 թ. յունուարի 23-ի նիստին եւ որոշւում է. «Թող տրուեն վկայականները»[137]:

Տէր Ազարիան քահանայական ձեռնադրութեան վկայականը ստանալով տեսնում է, որ փաստաթղթում անունը գրուած է P. Azaria (Padre=Հայր) D. Azaria (Don=Տէր), քանի որ ինքը կրօնաւոր չէր, այլ պարզ քահանայ: Ուստի ներկայացնում է նոր խնդրագիր, խնդրելով սրբագրել սխալները, միաժամանակ խնդրում է հրաման լատին ծէսով պատարագելու համար, բաւարարելու ժողովրդի պահանջները[138]: Քանի որ այս հարցը ժողովին չի ներկայացուել, մեզ անյայտ է մնում նաեւ ինչպէս է այն կարգաւորուել:

Տէր Խաչատուրից այլեւս ոչինչ չի լսւում, կարծես գործող անձը միայն տէր Ազարիան է, որի մասին մեր ունեցած վերջին փաստաթուղթը[139] ներկայացուել է Հաւատասփիւռի 1682 թ. փետրուարի 17-ի նիստին, որ արձանագրութիւնը հաղորդում է. «Մարտիրոսի որդի Ազարիան, հայ կաթողիկէ քահանան, որ ինը տարի է գտնւում է Մալթայում եւ կրում է արեւելցիների հովուական հոգսը, պատարագի համար բաւարար ողորմութիւն չգտնելով, խնդրում է նպաստ»: Պատասխանը լինում է «ընթերցուած», այսինքն ոչինչ չի որոշուած այս նիստում[140]:

135 Տե՛ս SC Armeni, vol. 2, f. 421:
136 Տե՛ս SOCG, vol. 477, f. 211:
137 Տե՛ս Acta, vol. 50, f. 34, n. 22:
138 Տե՛ս SC Armeni, vol. 5, f. 654:
139 Տե՛ս SOCG, vol. 483, f. 207:
140 Տե՛ս Acta, vol. 52, f. 42, n. 3:

ՑԱՒԵԼՈՒԱԾ

Խաչատուր եւ Ազարիա ճգնաւորները Հաւատասփիւռի ժողովին (1672 թ. յունիսի 2)[141]

Գեր քան վեր փառօք փառաւորեալ տեառն.

Ազնուազարմ եւ մեծագոյն եւ խորհրդահանճար պերճապատիւ եւ պայտազարմն, յոգնատենչ եւ նազաբանեալ ճշմարտագոյնի հարազատի երիցս երանեալ եւ սրբազանի գերամաքուր եւ հմտաբանեալ եւ լուսատու արեգականն ես դու նմանեալ. ծագող ի վերա[յ] երկրի եւ ճառագաթեալ, հոգւով լուսատու քան լուսին վառեալ, հոգիդ լուսաթռիչ, մարմինդ շաղկապեալ ի բնութիւնս սրբոց ես դուն մակադրեալ ի սէրն Աստուծոյ քիչ պարունակեալ, ի վեցթեւեան քերոբէից ես դուն նմանեալ քանց ականակապ թագիս դուն կազմեալ քանց մարգարտաշար զաստեղք զարդարեալ. հոգին սուրբ Աստուած ի քեզ բնակեալ Լատերանելի մէջ որ տեղդ ես բնակեալ հոգեւորդ մերոյ ի քեզ եմ յանձնեալ:

Ով սուրբ ժողովարան ամենայն հաւատացեալ քրիստոնէից. երկրպագութիւն մատուցանեմք աստուածարեալ սուրբ աջոյդ եւ երկնաչու գարշապարիդ քո. մեք հնազանդ հող եւ մոխիր ի տրուփ եւ տարաժամեալ ի հեռուստ եւ անծանօթ ծառա[յ]է քումմէ թիփլիզցի Տէր Խաչատուր քահանէ եւ էստատէ եւ եմք հնազանդ կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյն եւ գլխաւոր սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի եւ փոխանորդի վիմին մեծի փափին Հռովմա[յ] եւս պագանել երկիր մատուցի: Եւ ընդ ողջոյնական քարտիզիս գիտութիւն լիցի, եւ ես ուղ[ղ]ափառ եւ կաթոլիկ տէր Խաչատուր քահանայս կամք ունէի գալոյ առ սուրբ ուխտդ երկրպագութիւն եւ փափակս մեր լցուցանելոյ եւ ոչ կարայաք գալ:

Ծանուցում լիցի հրամանոցդ որքան ժամանակ է, որ մեք մոլորեալ էինք եւ ոչ եւս գիտէաք ճշմարտութեան ճանապարհն եւ ձեր սուրբ աղօթկն եկն առ մեզ եհաս եւ ճմլեաց սիրտք մեր եւ խնդրեմք ի Տեառնէ մերոյ Յիսուսէ Քրիստոսէ որ առքայութեան արժանի արասցէ պատրի Սրապիոնին, որ մեզ ճշմարտութեան ճանապարհն ցոյց ետոյր եւ մեք հաւանեցաք որքան որ կենդանի ենք մեք եւ շունչ կա[յ] ի բերանս մեր բոլոր սրտիւ, միամիտ մտիւք, բոլորովին հոգով պարսմիտ արարողութեան բովանդակ բանիւ եւ գործով հնազանդիմք Ռոմանիա կաթողիկէ սուրբ եկեղեցւոյն եւ անօթ ընտրեալ գլխաւոր սրբոյն Պետրոսի եւ Պողոսի եւ փոխանորդ նորա սուրբ պապին եւ ընթ[հ]անուր ամենայն հաստատեալ սուրբ ժողովոյն նորա ճշմարիտ որ նա է փակողն եւ կապողն եւ արձակողն ամենայն քրիստոնէից. նա է վէմ հաւատոյ, ըստ աւետարանին որպէս փրկիչն ամենայնի տէրն մեր Յիսուս Քրիստոս կու հրամա[յ]է ի սուրբ աւետարանին եթէ դու ես վէմ հաւատոյ եւ ի այդր վիմի շինեցից եկեղեցին իմ եւ որ արձակիս երկրի եղիցի արձակեալ երկինս եւ որ կապեսցիս երկրի կապեալ եղիցի երկրի. խոստովանիմք եւ հաւատամք ամենայն բոլոր սրտիւ որ դա է մայր ամենայն եկեղեցւոյ. ողորմած է եւ գթած:

Դարձեալ խոստովանիմք հնազանդիմք զոր ինչ հաստատեալ է եւ կարգեալ է. հնազանդիմ յօժար կամօք եւ լիակատար սրտիւ որչափ որ կարողութիւն ունիմք ուսուցանիմք եւ խրատիմք միամիտ ժողովուրդ մեր դարձուցանիմք ի մոլորութենէ ի ճշմարտութիւն, ի յանգիտութենէ ի գիտութիւն. դարձեալ այսպէս կամք յօժար ժողովրդեանն յուսուցանելով եւ քարոզելով շուրջ եմք գալիս որ աւելցի Ռոմանիա սուրբ եկեղեցւոյ հաւատն որն է ճշմարիտ եւ ուղղափառ եւ ընտրեալ ի մէջ քրիստոնէից. դարձեալ ծանիր այսպէս քարոզութեամբ շուրջ գու քա[յ]ինք չարն սատանա պատերազմեաց ի վերայ մեր բան չար լուր եղեւ համբաւն մեր ի վերայ երկրի եւ ի վերայ հաիոյ ազգին մեր եւ ամենայն Վրաստանս եւ ի մէջ վարդապետաց եւ ի մէջ քահանա[յ]ից, մինչեւ եհաս առ հաիոց կաթողիկոսն եւ բազում գրով մինչ աղաչեցին եւ մեք ոչ արարինք դաիլ նոցունց խոսացն այլ եւս մեր ուղ[ղ]ափառութեան բանն խօսեցանք

141 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 446, f. 179: Լիովին պահպանում ենք փաստաթղթի ուղղագրութիւնը եւ տեքստի հարազատութիւնը:

© National Library of Armenia